

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԵ Է ԶՄԱՍՆԱԿՑԻԼ ՍՈՒՐԲ ԽԱԶ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՌԱՆՑ ԽԱԶԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը յայտարարեց, որ ափսոսանքով տեղեկացած է, որ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցուց զմբէթին խաչի տեղադրումը Թուրքիոյ իշխանութիւններուն կողմէ անհիմն պատճառաբանութեամբ կը յետաձգուի: Մայր Աթոռին վստահեցուցած էին, որ Սեպտեմբերի 19-ին Սուրբ Խաչ եկեղեցուց մէջ մատուցուող Պատարագէն մէջ շաբաթ առաջ եկեղեցուց զմբէթին մնացուն կերպով պիտի գետեղուէր օծուած խաչը:

Նկատի առնելով խաչի տեղադրման վերաբերեալ կատարուած հաւատարմացումներու դրժումը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որ ընդունալով Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան խնդրանքին, սրբազան Պատարագին մասնակցութիւն պիտի բերէր երկու ներկայացուցիչներով, որոշած է առկախել անոնց մասնակցութիւնը Սեպտեմբեր 19-ին արարողութեան:

Այս ուղղութեամբ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանէն ներս վերջին օրերուն տեղի կ'ունենան ժողովներ՝ որոշելու համար Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցուց պատարագին մասնակցելու-չմասնակցելու հարցը: Որոշ աղբիւրներու համաձայն կան երկու տեսակետի կողմնակիցներ: Քննարկումները տեղի կ'ունենան լարուած մթնոլորտի մէջ, սակայն ընդհանուր յայտարարի գալը բաւական դժուար դարձած է, քանի որ հարցը շատ նուրբ է եւ որոշումը պէտք է ըլլայ չափազանց հաւասարակշռուած:

Սակայն, Թրքական մամուլի համաձայն Պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ Արամ Աթէշեան յայտնած է թէ, ինք տակաւին յոյս ունի որ, էջմիածնի միաբանները կը

մասնակցին պատարագին: Քննադատելով Հայաստանի եւ Սփիւռքի մէջ խաչի բացակայութեան շուրջ բանավէճերն ու քննարկումները, Արամ Սրբազան յայտարարած է, որ պատրիարքարանը հաւաստիացում ստացած է, թէ խաչը պիտի տեղադրուի մինչեւ պատարագ, սակայն եթէ այդ տեղի չունենայ մինչեւ Սեպտեմբեր 19-ը, խաչը վստահաբար կը տեղադրուի անկէ անմիջապէս յետոյ:

Միւս կողմէ, վանի առեւտրարդիւնաբերական պալատի նախագահ Զահիր Քանդաշօղլու յայտարարած է, որ պատարագին չմասնակցելու հայ հոգեւորականներու որոշումը շատ ճիշդ էր:

«Կը խոստանանք, սակայն մեր խոստումը չենք կատարել: Սխալ է: Պէտք է անյապաղ տեղադրել խաչը: Խնդիրը պէտք է լուծէ մշակույթի եւ զբօսաշրջութեան նախարարը: Նախարարին նամակ պիտի գրենք եւ հարցի քննարկման համար հասարակական կազմակերպութիւններու վանի պատգամաւորներու մասնակցութեամբ նիստ պիտի հրաւիրենք»,- ըսած է Քանդաշօղլուն:

Յիշեցնենք, որ 2007-ին վերանորոգուած եւ որպէս թանգարան գործող Աղթամար կղզիի Ս. Խաչ եկեղեցին վանի նահանգապետի եւ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի նախաձեռնութեամբ, Սեպտեմբերի 19-ին կրկին պիտի վերաբացուի կրօնական արարողութիւններու համար: Սակայն, թրքական իշխանութիւնները յայտարարած են, որ մինչեւ Սեպտեմբեր 19-ը տեխնիկական պատճառներով չեն հասցնէր եկեղեցուց զմբէթին խաչը տեղադրել, սակայն այդ կը կատարուի պատարագէն յետոյ:

ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԻ ԶԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ ԿՈՉ Կ'ԸՆԵՆ ԶԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ «ԽԱՏՕՐԵՆ ՊԱՅՊԱՆԵԼ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ»



ԵՄԱԿ ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԻ ԽԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ

Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) Մինսկի խումբի համանախագահները հանդէս եկած են միատեղ յայտարարութեամբ, ուր զարաբաղեան հակամարտութեան կողմերուն կոչ ըրած են «խստօրէն պահպանել զգինադադարի մասին համաձայնագրի դրոյթները, զսպուածութիւն ցուցաբերել տեղ-նազրի դրոյթները»:

Անդրադառնալով սահմանի Շարք էջ 4

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՆ ՂԱՐԻՊԻ »ՅՈՒՇԵՐՈՒ ԲԱԳԻՆ« ԶԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ



Հինգշաբթի, Սեպտեմբերի 2ին, 2010, Փաստինայի Հ.Կ.Բ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահը փութացած էր ընտրանի հասարակութիւն մը, ուր տեղի ունեցաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպած շնորհանդէսը նուիրուած ծանօթ կրթական եւ հասարակական գործիչ Արմէն Ղարիպի «Յուշերու Բագին» հատորին: Ներկաներուն մէջ կը նշմարուէին Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ներկայացուցիչ Արթ. Տ. Նարեկ Աւգ. Քհնյ. Մատարեան, Հոգ. Տ. Պարեո Մ. Վարդ Երէցեան, Գերշ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ներկայացուցիչ Արթ. Տ. Խորէն Քհնյ. Պապուշեան, Ս.Դ.Հ.Կ. Կեդր. Վարչութեան անդամներ Գրիգոր Խոտանեան եւ Տօքթ. Համբիկ Սարաֆեան, նախկին անդամ Հէրի Տիրամարեան, Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի ատենապետ Վազգէն Խոտանեան, ինչպէս նաեւ քոյր կազմակերպութեանց ներկայացուցիչներ, Արմէն Ղարիպի ազգականներ, նախկին սաներ եւ համակիրներ:

Շարք էջ 7

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ՎՏԱՆԳՈՒԱԾ

Երուսաղէմի քաղաքապետարանի, գերմանական թաղամասի հրեայ բնակիչներու եւ Հայոց պատրիարքարանի միջեւ 7 տարի շարունակուող հակամարտութիւնը՝ Երուսաղէմի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուց ճակատագրի շուրջ, նոր զարգացումներ արձանագրած է:

Քաղաքապետարանի որոշմամբ, եկեղեցուց կից պիտի կառուցուի բազմաշարկ հիւրանոց: Ըստ նոյն որոշման՝ հայկական եկեղեցին, որ այդպիսով, պիտի յայտնուի հիւրանոցային համալիրի բակին մէջ, պիտի տրամադրուի հրեայ բնակիչներուն՝ որպէս համայնքային կենտրոն:

Քաղաքապետարանի որոշումը բողոք յառաջացուցած է ոչ միայն Հայոց պատրիարքարանի, այլ նաեւ հրեայ համայնքի մօտ:

Կիրակի, Սեպտեմբեր 4-ի երեկոյեան համայնքի եւ Հայոց պատրիարքարանի ներկայացուցիչներու

զլխաւորութեամբ շուրջ 300 քաղաքացիներ՝ 250 հրեայ եւ 50 հայ, հաւաքուելով եկեղեցուց բակը՝ քաղաքապետարանի որոշման դէմ ստորագրահաւաք կազմակերպած են:

«Այս հաւաքը շատ կարեւոր է: Սեպտեմբերի 16-ին, աւելի կարեւոր բողոքի ցոյց տեղի պիտի ունենայ», - «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի ներկայացուցիչ Կորին վարդապետ Պաղտասարեան: - «Այդ օրը վերջնական որոշում պիտի կայացուի հիւրանոցի կառուցման հարցով: Անշուշտ, այդ ժամանակ նաեւ կ'որոշուի մեր եկեղեցուց ապագայ կարգավիճակը», - յայտնած է վարդապետը:

Եթէ բողոքի ցոյցերը արդիւնք չտան բացառուած չէ, որ Երուսաղէմի Հայոց պատրիարքարանը դատական կարգով բողոքարկէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին համայնքային կենտրոն դարձնելու որոշման դէմ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԱՄՈՒԿ

ՄՆՈՒՄ ԵՆ ԲՆԱԶԴՆԵՐԸ

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Արդիւնաւէտ քաղաքականութեան համար, ինչպէս ընդհանրապէս որեւէ արդիւնաւէտ գործունէութեան համար, պէտք են ռեսուրսներ: Հետեւաբար երբ Հայաստանի իշխանութիւնից հանրութիւնը պահանջում կամ ակնկալում է արդիւնաւէտ արտաքին քաղաքականութիւն, արժէ մտածել, իսկ ունի արդեօք Հայաստանի իշխանութիւնը դրա համար անհրաժեշտ ռեսուրս: Հիմնական ռեսուրսները թերեւս երեքն են՝ դիւանագիտական միտք, միջազգային յարաբերութիւնների գործում փորձուած, հմուտ, ինչպէս նաեւ երիտասարդ եւ նոր մտածողութեան, ազատ եւ թարմ մտածողութեան տէր կարգեր, ներքին տնտեսական, սոցիալական իրավիճակ, որը գտնուում է կայուն զարգացման փուլում ոչ միայն պաշտօնական վիճակագրութեան, աւելին՝ ոչ այնքան պաշտօնական վիճակագրութեան, որքան քաղաքացիական ընկալման տեսանկիւնից, եւ երրորդ՝ շատ փող, քանի որ արտաքին քաղաքականութիւնը նաեւ փող արժէ՝ թէ մասնագետներին վարձատրելու, թէ նորերը պատրաստելու, թէ ենթակառուցումներն ապահովելու, թէ քարոզչական-տեղեկատուական կարեւորագոյն ուղղութիւնն ապահովելու համար:

Արդեօք Հայաստանն այդ հիմնական ռեսուրսների առումով գտնուում է բաւարար մակարդակի վրայ: Թերեւս քչերի համար է գաղտնիք, որ Հայաստանի արտագործնախարարութիւնը հանդիսանում է մէկն այն պետական հիմնարկներից, որտեղ աշխատանքի տեղադրուելը հեղինակաւոր երեւոյթ է գանազան պաշտօնեաների, նրանց հարգանք-բարեկամների կամ յայտնի այլ անձանց երեխաների համար: Միգուցէ նրանք շնորհալի երեխաներ են, միջազգային յարաբերութիւնների մեծ վարպետներ: Պարզապէս զարմանալի է, որ հիմնականում հենց այդպիսի երեխաների շնորհքն է գնահատուած արտագործնախարարութիւնում: Դա չի նշանակում, որ այնտեղ չկան իսկապէս բարձրակարգ մասնագետներ: Բայց դա նոյնն է, ինչ ազնիւ պաշտօնեան Հայաստանի պետական կառավարման համակարգում. նրա գոյութիւնը յուզիչ է, բայց այդ գոյութեան օգտակար գործողութեան գործակիցը գրեթէ զրո, որովհետեւ համակարգը խժուում է հանրային ցանկացած օգտակարութիւն:

Ներքին կայուն զարգացման ռեսուրսի առումով իրավիճակը թերեւս առաւել տխուր է: Բանն այն է, որ Հայաստանի իշխանութեան համար, ընդ որում տարիներ շարունակ, թերեւս կեղծուած ընտրութիւնների աւանդութի հաստատումից ի վեր, ոչ թէ ներքին վիճակն է եղել արտաքին դիրքերը պահելու կենսական ռեսուրս, այլ արտաքին դիրքերն են եղել ներքին դիրքերը պահելու գլխաւոր ռեսուրսը: Այսինքն, Հայաստանի իշխանութիւնը չի զլացել արտաքին հարցերում գնալ Հայաստանի համար մեղմ ասած ոչ այնքան ցանկալի պայմանաւորութեան թիւնների, որպէսզի դրանց կողքին պայմանաւորութեան թիւն ձեռք բերի երկրի ներսում իշխանութիւնը պահել իր ունեցած յայտնի մեթոդներով: Այդպիսով, տարեցուտ Հայաստանի համար գրեթէ անհնար է եղել արտաքին քաղաքականութիւն իրականացնելը, եւ այն «վաճառելն»

ու ստացած «հասոյթը» ներքին կեանքում կիրառելն է դարձել պրակտիկա: Այդպէս Հայաստանի իշխանութիւնը կտրել է այն ճիւղը, որի վրայ ինքն է նստած, եւ թէեւ ինքն էլ ընկնուած է ճիւղի հետ, բայց դրական եւ կարեւոր է համարուում այն, որ ճիւղն ընկնուած է տակը կանգնած դժգոհ հասարակութեան գլխին:

Այդ ամենից յետոյ հարց է առաջանում՝ էլ ինչ փող: Փողը դա երրորդ ռեսուրսն է: Ասել, թէ այն ընդհանրապէս չկայ, կը լինի սխալ: Ի վերջոյ, սփիւռք կայ, սփիւռքահայ մեծահարուստներ կան, լոբբի կայ, Հայաստանում էլ քիչ փող չկայ տեղի հարուստների եւ բիզնեսով զբաղուող իշխանութեան ձեռքին: Բայց փողն ինքնին որպէս քանակ շատ քիչ է, քանի որ այն պէտք է օգտագործել: Այդ առումով, շատ խօսուել են երկու օրինակ, մէկը թարմ, միւսը ոչ այնքան: Սկսենք թարմից. հեռուստաընկերութիւններից մէկը ռեպորտաժ էր պատրաստել Հայաստանի ճանապարհներին ուղղութիւն ցուց տուող ցուցանակների բացակայութեան մասին, իսկ էկոնոմիկայի նախարարութեան պաշտօնեան ասում էր, որ դա թանկ ինդիք է, քանի որ ոչ միայն ռեսուրս է պահանջում վահանակները պատրաստելու, այլ նախ ճանապարհները գոյքագրելու համար:

Եթէ Հայաստանի պաշտօնեաների ծառայական մեքենաները մի քիչ քիչ երթեւեկեն այդ պաշտօնեաների եւ նրանց ընտանիքի ու գերդաստանի անդամների անձնական կարիքների համար, ու եթէ այդ պաշտօնեաներն էլ մի քիչ աւելի համեստ մեքենաներով «ծառայեն» պետութեանը, ապա թերեւս բաւական փող կը ինայուէր վահանակների հարցը լուծելու համար: Իհարկէ, օրինակը կապ չունի արտաքին քաղաքականութեան հետ: Այն կապ ունի ընդհանրապէս արդիւնաւէտ կառավարման հետ, որի մի մասն էլ արտաքին քաղաքականութիւնն է:

Միւս, հին օրինակը, Գալուստ Սահակեանի յայտնի խօսքն է այն մասին, թէ բա Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչները պէտք չէր հազնուեն ու չէր պայմաններում աշխատեն, որպէսզի մեր ընդունած հիւրերը մեր մասին լաւ կարծիք կազմեն: Եւ Հայաստանի իշխանութեան որեւէ ներկայացուցիչ Գալուստ Սահակեանին չփորձեց իմ բազմաթիւ կամ սրբազրել: Ու ոչ թէ որովհետեւ դա անշնորհակալ աշխատանք է, այլ թերեւս որովհետեւ բոլորն էլ մտածում են այնպէս, ինչպէս Գալուստ Սահակեանը: Բոլորի համար էլ կարեւորը արտաքինն է, փաթեթաւորումը, իսկ թէ ինչպիսին է բովանդակութիւնը, նրանց հետաքրքրում է թերեւս միայն անձնական գնումների դէպքում:

Մինչդեռ եթէ Հայաստանի իշխանական համակարգում մտածողութիւնը կանգնած լինի բովանդակութիւնից արտաքինին գալու ճանապարհին, այսինքն բովանդակութիւնը դիտուի արտաքինի հասնելու ուղի, միգուցէ արտաքին քաղաքականութեան որակն ու արդիւնաւէտութիւնն էլ կը փոխուի շօշափելիորէն:

Այլապէս դժուար է ասել, թէ ինչի վրայ է յենուած Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը: Այն բարձրակարգ մասնագետների վրայ չէ, ներերկրային մրցունակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆԱԴՈՐՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԵՆ

ՔՈՉԱՐԵԱՆԸ ՓՈՐՁՈՒՄ Ե ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹԻՒՆ ՍԱՅՄԱՆԵԼ ԳԵՌՈՒՄՍԱԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

Հեռուստատեսային դաշտում, բացի կապուղիների թուաչնացման գործընթացից, այլ պրոցէսներ էլ են ընթանում: Մասնաւորապէս, հեռուստաընկերութիւնների դաշտը երկու թեւի բաժանուելու միտումներ է դրսեւորում: Ռոբերդ Քոչարեանն առաջիկայում քաղաքական ակտիւացման ծրագրեր է մշակում, իսկ այդ ակտիւացումն առանց հեռուստա եւ ընդհանրապէս մեդիա աջակցութեան անհնարին է: Ուստի քոչարեանական թիմը փորձում է ոչ միայն պահպանել հեռուստաընկերութիւնների նկատմամբ ունեցած իր նախկին ազդեցութիւնը, այլեւ ամրապնդել ու ընդլայնել այն:

Այս հողի վրայ հեռուստաընկերութիւնները կամաց զբաղեցնում են այդ դաշտի համապատասխան հատուածը. ՀԶ-ը, «Երկիր մեդիան», «Կենտրոնը»՝ քոչարեանական, մնացեալը՝ սերժանտայինական: Հեռուստաընկերութիւնների այս դեպքումներն անշուշտ չեն վրիպել իշխանութեան աչքից, եւ, մեզ հասած լուրերով, սրանով լրջօրէն սկսել է զբաղուել ՀՀ նախագահի փեսան՝ Միքայէլ Մինասեանը: Մեզ հասած տեղեկութիւններով, վերջերս նա մի քանի հանդիպում է ունեցել ՀԶ-ի սեփականատէր Սամուէլ Մայրապետեանի հետ, որի ժամանակ շօշափուել են վերը նշուած հարցերը: Ի դէպ, խաղեր տուող հեռուստաընկերութիւնները հասկանում են, որ իրենց բարդ պայքար է սպասուում, եւ իշխանութիւնն այդքան հեշտօրէն չի գիշի, ուստի ամէն ինչ այրում է նրբօրէն՝ լարախաղացի զգուշութեամբ:

ԹՈՂ ՍԽԱԼՆԵՐ ԹՈՅԼ ՏԱ ՈՐԲԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԸ

Սերժ Սարգսեանը լրջօրէն նախապատրաստուում է գալիք նախագահական ընտրութիւններին: ՀՀ նախագահի ապարատին մօտ կանգնած մեր աղբիւրը տեղեկացնում է, որ անցած շաբաթ Սերժ Սարգսեանը նեղ շրջանակում խորհրդակցութիւն է անցկացրել ու իր կողմնակիցների միջեւ բաշխել ընտրատարածքները վերահսկելու գործը:

Երեւանում խորհուրդ է տուել առաւել ուշադիր լինել Շենգալիթ համայնքի նկատմամբ ու հրահանգել է այդ տարածքում աւելի շուտ սկսել ընտրութիւնների նախապատրաստման գործընթացը: Օճի նախագահ Արթուր Բաղդասարեանին կցել է Լուու, իսկ ԲՀԿ-ին՝ Գեղարքունիքի մարզերին: Այդ խորհրդակցութեան ժամանակ Սերժ Սարգսեանը հաստատապէս յայտնել է, որ նախագահի ընտրութեանն առաջադրելու է իր թեկնածութիւնը, եւ բացառապէս է որոշ մարտավարական գաղտնիքներ: Նա ասել է, որ չի ուզում

համակարգի վրայ չէ, փողի վրայ չէ: Մնում են թերեւս բնագրները, որոնք սակայն գուտ անձնական կատեգորիա են եւ նոյնիսկ ամենամեծ ցանկութեան դէպքում անգամ երեւի թէ չեն կարող լինել պետական շահը սպասարկելու ունակ ռեսուրս:

«ԼՐԱԳԻՐ»

կոնֆլիկտներ սրել եւ այնպէս է անելու, որ իր մասով ընտրութիւնները մաքուր անցնեն: Ուստի իր կողմնակիցներին զգուշացրել է առձակատման մէջ չմտնել ընդդիմութեան հետ եւ ընտրել այնպիսի ռազմավարութիւն, որ կոպիտ սխալներ թոյլ տա իր հակառակորդը: Տուեալ դէպքում նկատի ունի Ռոբերդ Քոչարեանին:

ՆՐԱՆՑ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԲԱՐԻՇԱՅՆԵԼ

Վերջին շրջանում, ըստ մեր տեղեկութիւնների, Յովիկ Աբրահամեանը եւ Ներսէս Նազարեանը յամառօրէն փորձում են «բարիշացնել» Գագիկ Ծառուկեանին Սերժ Սարգսեանի եղբօր՝ Սաշիկ Սարգսեանի հետ, որը, ըստ այդ նոյն աղբիւրների, յամառօրէն հրաժարուում է: Ասում են, թէ վերջին անգամ նոյնիսկ նրան ասել են. «Լաւ, որ ախպերդ ասի, էլի՛ չես բարիշի»: Ասում են՝ Սաշիկն էլ ասել է. «Ախպերս ինչի՞ պէտք է տենց բան ասի»:

Յիշեցնենք, որ վերջին օրերին յամառօրէն լուրեր էին տարածուում Գագիկ Ծառուկեանի դէմ մահափորձի մասին, եւ մեզ տեղեկատուութիւն տրամադրած աղբիւրը պնդեց, որ այս խօսակցութիւնները գալիս են հենց այն շրջանակներից, որոնք ուզում են լաւացնել Ծառուկեանի ու Սարգսեանի յարաբերութիւնները:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
 ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
 Գե. (626) 797-7680
 Ֆաքս. (626) 797- 6863
 E:Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E:Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To
 MASSIS WEEKLY
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹԵԱՆ Է ՈՒՂԱՐԿԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ազգային ժողովի երկու ընդ- դիմադիր խմբակցությունները՝ «Ժառանգություն»-ը եւ Դաշնակցությունը վենետիկի յանձնաժողով են ուղարկել Ընտրական օրենսգրքի բարեփոխումների իրենց առաջարկությունները՝ որպես հակակշիռ իշխանությունների ուղարկած նախագծի:

Ընդգծելով, որ Հայաստանի իշխանությունների պատրաստած ընտրական փոփոխությունների նախագիծը «չի ապահովում ընտրություններում արձանագրուած ընտրախախտումների կանխարգելման եւ սահմանափակման մեխանիզմների արդիւնաւէտ գործադրումը»՝ «Ժառանգություն»-ը եւ Դաշնակցությունը ներկայացրել են 11 կէտից բաղկացած սեփական առաջարկները:

Մասնաւորապէս, ընտրախախտումները կանխելու նպատակով խորհրդարանական ընդդիմությունը առաջարկում է նախ ձեւաւորել Ազգային ժողովի 100 տոկոսով համամասնական ընտրակարգ: Նաեւ՝ սահմանել ընտրական յանձնաժողովների ձեւաւորման նոր կարգ, ըստ որի կենտրոնական ընտրական յանձնաժողովում խորհրդարանում ներկայացուած ընդդիմադիր եւ իշխանական կուսակցությունները կ'ունենան հավասար թիւով անդամներ:

Բազմակի քուէարկութիւնները ու լցոնումները բացառելու

նպատակով առաջարկուած է հրապարակել քուէարկութեան մատուցողները՝ դրանք պատճէնահանելու ու փակցնելով ընտրական տեղամասերում, սկանաւորել քուէարկութեան մասնակցող իւրաքանչիւր ընտրողի անձնագիրը, տեսաձայնագրել քուէարկութեան կազմակերպումն ու հաշուարկի ընթացքը:

«Ժառանգություն» խմբակցությունը ղեկավար Ստեփան Սաֆարեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում տեղեկացրեց, որ նշուած առաջարկները ՀՅԴ խմբակցութեան հետ միասին մշակուել ու ուղարկուել են վենետիկի յանձնաժողով այն բանից յետոյ, երբ իրենց միջազգային կառույցների (մասնաւորապէս՝ ԵԱՀԿ-ի) ներկայացուցիչների հետ զրոյցի ընթացքում յայտնի է դարձել, որ իշխանութիւնները վենետիկի յանձնաժողով են ուղարկել ընտրական բարեփոխումների իրենց մշակած առաջարկները՝ միջազգային կառույցներին ներկայացնելով, թէ դրանց մշակմանը մասնակցել է նաեւ խորհրդարանական ընդդիմութիւնը:

«Մենք, անակնկալի գալուց բացի, պատասխանեցինք, որ մենք ոչ միայն առնչութիւն չունենք, այլ նաեւ դէմ ենք ներկայացուած տարբերակներին, քանի որ արդէն իսկ հասցրել էինք ծանօթանալ», - ասաց Սաֆարեանը:

ԱՇՈՏ ՍԱՆՈՒԶԱՐԵԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԵԼ Է ԼԵՒՈՆ ԶՈՒՐԱԲԵԱՆԻ ԱՍԱԾԻՆ

«Լեւոն Տէր-Պետրոսեանի իշխանութեան օրօք ամենաարմատական ընդդիմութեան հետ մենք համագործակցում էինք», - Սեպտեմբերի 3-ին յայտարարել էր Հայ Ազգային կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեանը:

«Երբ»-ի հետ զրոյցում «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, ՀՀ նախագահի ազգային անվտանգութեան հարցերով նախկին խորհրդական Աշոտ Մանուչարեանն ասել է, թէ պատերազմական տարիներին՝ մօտաւորապէս մինչեւ 1994թ., խաղաղութեան պայմանագրի կնքումն իրօք խոր համագործակցութիւն է եղել ընդդիմութեան հետ՝ ազգային անվտանգութեան, արտաքին քաղաքականութեան ուղղութեամբ:

-Այդ տեսակէտից, կարծում եմ, որ չկար որեւէ կուսակցութիւն, որի հետ չի եղել համագործակցութիւն եւ որի հետ, իրօք, չի եղել փոխըմբռնման խնդիրներ չվերլուծելը: Հետագայում այդ ականդոյթը սրընթաց վերացաւ Հայաստանից եւ փոխուեց այն ականդոյթով, որը մինչեւ այսօր գործում է, - ասել է Ա. Մանուչարեանը:

-Ցանկացած միջոցառում, այդ թւում նաեւ ընդդիմութեան հանրահաւաքները, եթէ եղել են ի նպաստ Հայաստանի անվտանգութեան, արտաքին քաղաքականութեան, մասնաւորապէս Արցախի կարեւորագոյն շահերի, ապա այդ տիպի համագործակցութիւն եղել է շատ խորքային եւ ամենամասնապասելի, միգուցե, ոլորտում:

Ինչ վերաբերում է Լեւոն Զուրաբեանի այն խօսքերին, թէ եթէ այսօրուայ իշխանութիւնները մի քիչ խելք ունենային, իրենք նոյն կերպ կը վարուէին, Ա. Մանուչարեանը նշել է:

-Այն, ինչ առաջարկում է եւ նկարագրում է, դա մի այլ տիպի պետութիւն է, այլ տիպի հասարակութիւն, այլ տիպի արժէքներ, որոնք արդէն բաւականին երկար ժամանակ է՝ Հայաստանում չկան: Հայաստանն այդպիսին էր պետութեան կազմաւորման սկզբում, այդպիսի որակներ ունէր, որոնք հետագայում վերացան: Վերացնելը հեշտ է, վերականգնելը շատ դժուար:

Ամէն դէպքում, Ա. Մանուչարեանը յաւելել է, որ սկզբունքորէն այդպիսի վիճակ հնարաւոր է:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՅՈՒ

Վարչական դատարանը մերժել է Հայ Ազգային կոնգրէսին անդամակցող Հայոց Համագային Շարժման հայցը, որով պահանջուած էր անվաւեր ճանաչել Երեւանի քաղաքապետարանի լիազօր ներկայացուցչի Սեպտեմբերի 1-ի որոշումը, որով արգելուել էր Սեպտեմբերի 17-ին հանրահաւաք անցկացնել Ազատութեան հրապարակում:

Դատարանում հայցուոր կողմի շահերը ներկայացնող փաստաբան Վահէ Յովսէփեանը դեռ մինչեւ դատարանի որոշումը «Ազատութիւն» ռադիոկայանին ասել էր, որ «ակնկալիք չունի»:

Հարցին, թէ այդ դէպքում ինչու են դիմում դատարան փաստաբանը ասաց. - «Եթէ ապօրինութիւնը մնում է բողոքարկուած, դա տեղիք է տալիս հետագայում այլ ապօրինութիւնների: Այսինքն՝ ինչքան էլ դատարանը մերժում է

այդ հայցը, քաղաքապետարանը սովորում է, թէ ոնց պիտի օրէնքով շարժուի»:

Իսկ դատարանի որոշման հրապարակումից յետոյ Յովսէփեանն ասաց, որ դիմելու են վերադաս դատական ատեաններին. - «Տուեալ որոշումը կը բողոքարկենք վճռաբեկ դատարանում»:

Քաղաքապետարանը իրազեկումը մերժել էր՝ պատճառաբանելով, թէ Սեպտեմբերի 9-ից մինչեւ Հոկտեմբերի 10-ը ամէն օր Ազատութեան հրապարակում ընթանալու են «Էրեբունի - Երեւան» տօնակատարութեան նախապատրաստական աշխատանքներ: Ընդդիմութիւնը, մինչդեռ, պնդում է, որ որոշումն ընդունուել է անձամբ Սերժ Սարգսեանի կողմից:

Սեպտեմբերի 17-ին հանրահաւաքը ընդդիմութիւնը անցկացնելու է Մատենադարանի մօտ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅՈՒՍՈՎ ԵՆ, ՈՐ ԻՐԱՆՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՒԸ Կ'ԱՃԻ

Սեպտեմբերի 22-23-ին Հայաստան կը ժամանի Իրանի ԿԳ փոխնախարարը:

Ինչպէս Սեպտեմբերի 7-ին լրագրողներին յայտնել է Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանը, պատուիրակութիւնը կ'այցելի մի շարք հայկական բուհեր, որոնց կողմից տրուած դիպլոմների ճանաչման հետ Իրանում խնդիրներ

էին ծագել: Մասնաւորապէս, խօսքը գնում է Երեւանի պետական համալսարանի, Մ. Հերացու անուան բժշկական համալսարանի, ինչպէս նաեւ պետական ծարտարագիտական համալսարանի մասին:

Աշոտեանը յոյս է յայտնել, որ դրանից յետոյ իրանցի ուսանողների թիւը հայկական համալսարաններում կ'աճի:

Կ'ունենայ ակնկալի շատ պատուէրներ:

«Այս գործը սկսել ենք Եւրոպայից, անցել ենք Միջին Ասիա, տարածաշրջանում խոշոր պատուէրներ ունենք եւ յոյս ունենք, որ Հայաստանը, լինելով պատուիրատու, կը դառնայ պատասխանող մեր հետագայ գործողութիւնները կարգաւորելու համար», - ասաց նա:

Պատասխանելով հարցին, թէ որքանով է կարեւորում եւ հնարա-

ւոր համարում հայ-թուրքական սահմանի բացումը՝ Մեսութ Սեֆարը ասաց. - «Դա քաղաքականութիւն է, որն արւում է քաղաքական գործիչների կողմից: Մենք ընդամենը գործարարներ ենք, գործարարութիւնն է, որ նպաստելու է քաղաքականութեան պարզեցմանը: Մենք հաւատում ենք, որ վաղ թէ ուշ փակ սահմանի հետ կապուած այդ ամբողջ պատմութեան վրայ լոյս կը սփռուի»:

ԲԱՑՈՒԵՑ «ԱՐՄԵՆԻԱ ԷՔՍՊՕ 2010» ՑՈՒՑԱՐԱՆԴԵՍԸ



«Արմենիա Էքսպօ 2010» մասնակցող ընկերութիւններու տաղաւարները

Կարէն Դեմիրճեանի անուան Մարզահամերգային համալիրում բացուեց «Արմենիա Էքսպօ 2010» տարածաշրջանային 10-րդ առեւտրա-արդիւնաբերական ունիվերսալ ցուցահանդէսային ֆորումը:

Ներկայացուած են ակնկալիքան 180 տեղական եւ օտարերկրեայ կազմակերպութիւններ 14 պետութիւններից: Մասնակից երկրների շարքում են Հայաստանը, Ռուսաստանը, Բելառուսը, Իրանը, Արաբական էմիրութիւնները, Գերմանիան, Վրաստանը, Թուրքիան, Չինաստանը, Լեհաստանը, Իտալիան: Հիմնականում ներկայացուած են շինարարութեան, արդիւնաբերական ոլորտի, կենցաղային եւ սպառողական ապրանքներ:

«Սա Հայաստանի տնտեսու-

թեան բոլոր ճիւղերը ներկայացնելու ստուգալցն է, երբ ամառուայ տապից յետոյ ներկայացնում ենք հանրութեանը, թէ ինչ ունենք եւ կարող ենք ունենալ առաջիկայում», - յայտարարեց Հայաստանի արդիւնաբերողների եւ գործարարների միութեան նախագահ Արսէն Ղազարեանը:

Թուրքական «Բինա Եափի» ընկերութիւնը, որի հայաստանեան ներկայացուցիչը «Մետալէյս» ընկերութիւնն է, առաջարկում է դեկորատիւ մեկուսիչ պանելներ: Ընկերութեան գլխաւոր ինժեներ, ազգութեամբ թուրք Մեսութ Սեֆարը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, թէ ուսումնասիրել է շուկան եւ հաւատում է, որ Հայաստանի շնորհիւ

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔ ՓՈՐՁԱԳԵՏ. «ԹՈՒՐՔԻԱՆ ՊԵՏՔ Է ԵՎԱՆԱԶԻ ՅԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ»

«Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը»: Այս մասին Սեպտեմբերի 4-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց Թուրք փորձագետ, քաղաքական գիտությունների դոկտոր, Իզմիրի տնտեսագիտական համալսարանի դասախոս Ջաֆէր Եորուքը: Նրա խօսքով, Թուրքական հասարակությունը խանգարում է հնարաւոր հետեւանքների հանդէպ վախը:



Ջաֆէր Եորուք

Դեկտեմբերի 15-ին եւ մէկ օրուայ ընթացքում հաւաքել էր աւելի քան 8 հազար ստորագրութիւններ: Ակցիայի նախաձեռնողներն էին Ստամբուլի Բահչեշէհի համալսարանի պրոֆեսոր, լրագրող Չենզիւ Աքթարը, պրոֆեսոր Բաշքըն Օրանը եւ Թուրքիայի ակադեմիական շրջանակների եւս 200 ներկայացուցիչներ: «Ես նոյնպէս դրել եմ իմ ստորագրութիւնը», - հպարտօրէն ասել է Ջաֆէր Եորուքը:

«Թուրքիայի մեծամասնութիւնը կարծում է, որ ցեղասպանությունը ճանաչելով՝ իրենք մեծ տարածքներ կը կորցնեն», - յստակեցրել է Թուրք փորձագետը՝ մէջբերելով Զիլմուդ Ֆրէյդի խօսքերը. «Նա, ով մերժում է, հրաշալի գիտի՝ ինչու է այդպէս անում, եւ դրանում է նրա թուլութիւնը»:

«Հրանդ Դինքի սպանութիւնը ողբերգութիւն էր, սակայն այն խթան հանդիսացաւ Թուրք հասարակութեան համար» յայտարարեց Թուրք դասախօսը: Նրա խօսքով, Հրանդ Դինքի յուղարկաւորութեանը ներկայ էր աւելի քան 100 հազար մարդ, այդ թւում՝ եւ ինքը:

«Թուրքիան հեղեղել էր զայլորոյթի եւ բողոքի ալիքը, հազարաւոր մարդիկ դուրս էին եկել փողոցներ. վերելից ոչ մի ճնշում չօգնեց», - յիշեցրել է նա՝ աւելացնելով, որ այս ամէնը «Թուրք հասարակութեան համար լուսաւորութեան» սկիզբ հանդիսացաւ:

Նշենք, որ «Հայե՛ր, ներէք մեզ» խնդրագիրը ինտերնետում տեղադրուել էր 2008 թուականի

Ջաֆէր Եորուքն այցելել է Հայոց ցեղասպանութեան զոհերի Ծիծեռնակաբերդ յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելով Օսմանեան Թուրքիայում սպանուած 1,5 մլն հայերի յիշատակին: Այնուհետեւ Եորուքն ուղեւորուել է Ծիծեռնակաբերդի թանգարան, որտեղ հաւաքուած եւ ներկայացուած են անցած դարասկզբի արիւնոտ կոտորածի պատմական փաստերը:

ԺԵՐԱՐ ԴԵՊԱՐԴԻԷ. ԵՍ ՈՒՐԱԽ ԿԸ ԼԻՆԵՍ ՖԻԼՄ ՆԿԱՐԵԼ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

«Իմ խաղացած դերերից ամենասիրելին, անշուշտ, Սիրանօ դը Բերթերակի դերն է եղել», - Սեպտեմբերի 4-ին Երեւանում տեղի ունեցած ասուլիսում յայտարարեց ֆրանսիացի յայտնի դերասան Ժերար Դեպարդիէն: Նա Հայաստան է ժամանել՝ մասնակցելու միջազգային մշակութային «Կարօտ» փառատօնին:



Ֆրանսիացի դերասան Ժերար Դեպարդիէ

Յայտնի ֆրանսիացին խոստովանել է, որ տեղեկացուած է եղել Հայաստանի մասին մինչ իր այցելութիւնը: «Իսկ հիմա, ժամանելով Հայաստան, ես համոզուեցի, որ Հայաստանը շատ հետաքրքիր երկիր է՝ իր բացառիկ աշխարհագրական դիրքով, երկիր, որը նայում է դէպի առաջ՝ չմոռանալով իր անցեալը», - նկատեց դերասանը: Նա նաեւ նշեց, որ ուրախ է «Կարօտ» փառատօնին իր մասնակցութեան համար, փառատօն, որը խորհրդանշում է 7 միլիոն հայերի ցաւը, ովքեր ճակատագրի բերումով ստիպուած են ապրել իրենց հայրենիքից հեռու:

Ֆրանսիացի դերասանը չի բացառել Հայաստանի մասին երբեք ֆիլմ նկարելու հնարաւորութիւնը: «Ես ուրախ կը լինեմ ֆիլմ նկարել Հայաստանի պատմութեան փուլերից մէկի մասին: Այդ ֆիլմի վրայ ինձնից բացի կարող են աշխատել նաեւ Ֆրանսիայի հայազգի դերասանները», - խոստացել է դերասանը:

ՕՉԱԼԱՆ. «ԴԻՆՔԻ ՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆ ԷՐ»

Թուրքական իմրալը կղզում ցմահ ազատագրկման դատապարտուած բուրդ առաջնորդ Աբդուլլահ Օջալանը փաստաբանների միջոցով իր մտքերն է փոխանցել: Քրդական Firat գործակալութեան փոխանցմամբ՝ Օջալանն անդրադարձել է նաեւ «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր, պուրասահայ հասարակական գործիչ Հրանդ Դինքի սպանութեանը: Քուրդ առաջնորդը նշել է, որ հայերի ցեղասպանութիւնը դեռ շարունակուած է եւ Դինքը այդ ամէնի վերջին զոհն էր:

Եղաւ: Դինքին սպանող Օզիւն Սամասթին թուրքական անվտանգութեան ուժերը հերոս դարձրեցին, նրան գրկաբաց ընդունեցին», - նշել է Օջալանը:

«Վերջինը Հրանդ Դինքն էր մնացել, նրան էլ վերացրեցին: Դինքը ոտքի կանգնած վերջին հայն էր: Թուրքիայում բնակուող միւս հայերը վախով են ապրում: Դինքն իր ազատամտութեան համար սպանուեց: Դա հայի վերջին սպանութիւնն էր: Յետոյ ի՞նչ»

Յիշեցնենք, որ Աբդուլլահ Օջալանը, ով քրդերի շրջանում յայտնի է նաեւ Աբօ անունով, «Քուրդիստանի Բանուորական Կուսակցութեան» (PKK) հիմնադիրն է եւ առաջնորդը: Քուրդիստանի անկախութեան համար 26-ամեայ պայքար մղող Աբդուլլահ Օջալանը 1999 թուականին ձերբակալուել է եւ թուրքական դատարանի կողմից դատապարտուել ցմահ ազատագրկման՝ բազմաթիւ ահաբեկչական գործողութիւնների եւ սպանութիւնների մեղադրանքով ու ուղարկուել իմրալը կղզում գտնուող բանտը: Վերջինս 40 անուն գրքի հեղինակ է:

HayNews.am

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՅԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ ԵՆ ՓԱԿՈՒՄ

Վրաստանի Հայ Համայնքը պաշտօնական նամակով դիմել է Վրաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Դմիտրի Շաչկիւնին՝ Թբիլիսիի հանրակրթական թիւ 110, 95 դպրոցների եւ թիւ 146 դպրոցի հայկական բաժնի լուծարման ու վերակազմաւորման մասին՝ վերջերս տարածուած լուրերի առնչութեամբ:

կան դպրոց է, ուր, բնականաբար, սովորում են ազգային փոքրամասնութեան ներկայացուցիչները: Բնական է, որ Վրաստանի տարածքում գործող կրթութեան ու մշակոյթի հայկական օջախները Վրաստանի Հայ Համայնքի յատուկ ուշադրութեան առարկան են, եւ այդ կառուցների հետ կապուած ամէն կարգի գործունէութիւն՝ լուծարում, վերակազմաւորում կամ այլ փոփոխութիւն, անմիջակայս վերաբերում է Վրաստանի Հայ Համայնքի անդամներին՝ ազգութեամբ հայ Վրաստանի քաղաքացիներին ու նրանց կենսական շահերին», - ասուած է դիմումում:

Վրաստանի Հայ Համայնքի մամուլի ծառայութիւնից NEWS.am-ին յայտնում են, որ դիմումում Վրաստանի Հայ Համայնքը նախարարութեանը խնդրում է պատասխանել հետեւեալ հարցերին.

1. Ի՞նչ շարժառիթներով են պայմանաւորուած Վրաստանի ԿԳՆ որոշումները նշուած դպրոցների լուծարման-վերակազմաւորման մասին,

Վրաստանի Հայ Համայնքը յոյս է յայտնում, որ Վրաստանի ԿԳՆ-ն, որպէս պետական իրական ժողովրդավարական մարմին, կը կատարի իր ստանձնած պարտաւորութիւններն ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների, մասնաւորապէս, ազգային փոքրամասնութեան՝ մայրենի լեզուով ուսում ստանալու եւ մշակոյթը պահպանելու պաշտպանութեան հարցում:

2. Ի՞նչ պայմաններում պետք է անցնեն այդ գործընթացները կոնկրետ այդ դպրոցներում:

«Յիշեցնենք, որ Թբիլիսիի թիւ 110 եւ 146 հանրակրթական դպրոցներն այն կրթօջախներից են, որտեղ գործում են հայկական բաժիններ, իսկ թիւ 95-ը գուտ հայկա-

ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԻ ՅԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

թեան», - ըսած է Սահակեան:

Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, Սեպտեմբեր 5-ի գիշերը ու օրուայ ընթացքին զարաբաղա-ատրպէյ-ճանական զօրքերու շփման գոտիի ամբողջ երկայնքով արձանագրուած է «գինադադարի ռեժիմի խախտման աննախադէպ ակտիւութիւն», որու ընթացքին ատրպէյ-ճանական զինուած ուժերու յառաջապահ ստորաբաժանումներու կողմէ զարաբաղեան դիրքապահներու յենակէտերուն վրայ արձակուած է 5 հազարէ աւելի կրակոց:

ԼՂՀ Պաշտպանութեան նախարարութեան տուեալներով, առաւել աշխուժ կրակոցներ արձանագրուած է յատկապէս Հադրութի, Ասկերանի եւ Մարտակերտի պաշտպանական դիրքերու ուղղութիւններով:

«Վերջերս ատրպէյճանական կողմը աւելի լկտիաբար է սկսել խախտել գինադադարի ռեժիմը՝ դիմելով դիւերսիոն գործողութիւնների: Ի պատիւ մեզ, Պաշտպանութեան բանակը արդիւնաւէտօրէն կասեցրել է այդ բոլոր սաղրանքները՝ եւս մէկ անգամ ապացուցելով, որ հզօր ու մարտունակ է եւ միշտ պատրաստ է արժանի հակահարուած տալ թշնամու ցանկացած ոտնձգու-

Կորուստներ, ըստ Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութեան՝ չկան:

Advertisement for Dr. Missak Ekmekdjian and Dr. Anahid Ekmekdjian, Chiropractors. Includes address: 833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065. Text: Մեծածառակներու եւ մանուկներու Քայրափոքրից բուժում: Գլխացաւ, վզի, մէջքի, յօդադիւղի եւ մկանային ցաւեր: Ինքնուշարժի վթարի հետեւանքով պատասխան վեատուսթիքներու բուժում: Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԼՈՒՐԵՐ

«ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, ՈՐԸ ԿԱՐՈՂԱՆԱՅ ՍՓԻՒՌԲԻՑ ԵԿԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԾԱՌԱՅԵՑՆԵԼ ԶՅ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ»

- Կնքուել են հայ-ռուսական 5 համաձայնագրեր, որոնք ունեն նաեւ տնտեսական կողմ: Ինչպէ՞ս էք գնահատում այս իրողութիւնը, որն է Յայաստանի բիզնես շահը այս իրավիճակում, հնարաւոր է արդեօք դա հաշուարկել, թէ Յայաստանի բիզնես կոնկրետ ինչ է շահում:

- Կնքուած պայմանագրերի մէջ Հայաստանի բիզնեսին անմիջականօրէն վերաբերուած է միայն նոր ատոմակայանի շուրջ ստորագրած փաստաթուղթը: Մնացածի պարագայում ինչ յայտնի չեն բիզնեսին անմիջապէս վերաբերուող դրոյթները:

- Որքանո՞վ է իրական դրանց իրականացումը, մասնաւորապէս ատոմակայանի կառուցման խնդիրը:

- Հին ատոմակայանը, որը շահագործման է յանձնուել 1970-ականներին եւ փակուել 1989-ին, իսկ ապա վերագործարկուել մեր իշխանութեան օրօք՝ 1995-ին, մի օր պիտի փակուի: Դրա շահագործման հաշուարկային ժամկետը 30 տարի է: Այն արդէն լրացել է: Իհարկէ, կարելի է դրանից յետոյ էլ փորձել շահագործել: Բայց այն այլեւս վտանգաւոր է: Մասնաւորապէս, կայ այնպիսի հասկացութիւն, ինչպիսին է մետաղի յոգնելը: Այն ծերանում է: Դա կարող է ունենալ բացասական հետեւանքներ: Ըստ իս, նոր ատոմակայանը մենք պէտք է արդէն ավարտելու վրայ լինէինք: Դրա համար 2001-2002 թթ. սկսած ՀՀ իշխանութիւնները, նախեւառաջ, արտերկրից եկած տրանսֆերտները (փոխանցումները) պէտք է ստերիլիզացնէին (այսինքն գնէին ու շրջանառութիւնից դուրս հանէին): Նրանք, ընդհակառակը, այդ միջոցները բաց թողեցին դրամական շուկայ, արժեւորեցին դրամը, հարստացրին ներմուծողներին, սպաննեցին արտահանման սեկտորը: Ի վերջոյ, ապրանքների ու ծառայութիւնների փոխարէն ներմուծողները սկսեցին արտահանել կապիտալը:

Այդ ազգադաւ քաղաքականութեան հեղինակները ոչ միայն չպատժուեցին, այլեւ առաջ քաշուեցին (Տ. Սարգսեան, Ն. Երիցեան): Այս պայմաններում նոր ատոմակայանի շինարարութեան մէկ աղբիւր է մնում՝ բիզնէս: Նկատի ունենալով, որ արդէն 2 տարի յետոյ արտաքին պարտքի սպասարկումը պահանջելու է աւելի քան 500 մլն դոլար տարեկան, ես իրական չեմ համարում բիզնէս

Յայ-ռուսական վերջին համաձայնագրերի տնտեսական կողմը մեկնաբանելու խնդրանքով Iragir.am դիմել է Յայաստանի նախկին վարչապետ Զրաճ Բագրատեանին

հաշուին ատոմակայանի շինարարութիւնը: Ռուսները յայտարարեցին, որ պատրաստ են տալու պահանջուող գումարի 20 տոկոսը: Ի՞նչ հիմունքներով՝ ինչ յայտնի չէ: Նախ, նրանք գիտեն, որ Հայաստանին վարկ տալն անիմաստ է: Արդէն 1-2 տարուց Հայաստանը ստիպուած է լինելու այդ նոյն Ռուսաստանից նոր վարկ վերցնել հին վարկերը փակելու համար: Երկրորդ, հաւանաբար նրանք կը հռչակուեն նոր ատոմակայանի փայտէր: Հնարաւոր է նաեւ, որ այդ 20 տոկոսը վերահաշուարկուի իբրեւ կապալառուի գերեկամուտ: Ինչեւէ, նոր ատոմակայանն այս իշխանութեան օրօք քիչ հաւանական է, որ կառուցուի: Եթէ սկսեն էլ, ապա կը կառուցուի մի ամբողջ հարիւրամեակ: Միակ փողը այսօրուայ վիճակով տրանսֆերտներն են, դրանց ստերիլիզացիան: Բայց դա կը բերի գնածի: Սա էլ իր հերթին հնարաւոր է զսպել տնտեսութիւնը ապամենաշնորհացնելով: Իսկ դա հնարաւոր է միայն իշխանափոխութեան պարագայում: Այլապէս ցոյց տուէք այսօրուայ իշխանութեան մէջ մեկէկին, որը կ'ապամենաշնորհացնի Ռ.Քոչարեանին եւ այլոց:

- Յայ-ռուսական վերջին համաձայնագրերն, ըստ Ձեզ, ինչ ազդեցութիւն կ'ունենան Յայաստանի եւ Արեւմուտքի յարաբերութեան վրայ տնտեսական ծրագրերի առումով, ըստ Ձեր հաշուարկի, որքան ներդրումներ, իրական եւ պոտենցիալ, չեն կատարուի Յայաստանում, որքան արեւմտեան, այդ թուում Սփիւռքի, ընկերութիւններն են հեռացել երկրից:

- Արեւմուտքն արդէն 10 տարուց աւել է, որ Հայաստանում ռազմավարական ներդրումներ չի անում: Բնական է, ռուսական բազայի առկայութեան պայմաններում ՀՀ համար ռազմավարական ներդրող Ռուսաստանն է: Այն էլ սպառել է ներդրման հնարաւոր ոլորտների ցանկը: Այս ամէնի պատճառով ՀՀ-ում վերջնական սպառումը կազմում է ՀՆԱ 81.8 տոկոսը (2007թ): Խնայողութիւններն ու համախառն կուտակումները ցածր են: Ներդնելու բան չկայ, տեղ չկայ: Բանկերը ընկած վարկ վերցնող են ման գալիս: Ծրագիր չկայ, ձեռներէց չկայ: Բոլորն էլ հասկանում են, որ ինչ



բիզնէս էլ ձեռնարկեն՝ մենաշնորհների պայմաններում տակ են տալու: Դրա համար էլ աւելցուկային կապիտալը հանրապետութիւնից արտահանուած է: Սփիւռքից եկած փողի մօտ կէսը դուրս է գնում: Այս առումով սփիւռքն արժի ծառայութիւն է մատուցում: Արեւմուտքն ու միջազգային ֆինանսական կառուցներն իրենց օգնութիւնը չեն կասեցնի: Աստիճանաբար կը սառեցնեն: Արեւմուտքն ընդհանրապէս կողմ է, որ այստեղ գերակայեն Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական շահերը: Նրանք յոյս ունեն, որ այդպէս, ինչպէս 20-րդ դարի 80-ական թուականներին ԽՍՀՄ պարագայում, Ռուսաստանն իր միջոցները կը ցրի եւ կը կանգնի տնտեսական աղէտի առաջ: Ռուսներն էլ յիմար չեն: Սա հասկանում են: Եւ,

ուրեմն, լուրջ միջոցներ Հայաստան եւ այլուր չեն տանելու:

- Այս պայմաններում, որո՞նք են Յայաստանի տնտեսական զարգացման հեռանկարները:

- Մեր յոյսը մեր ներքին խնայողութիւնները պէտք է լինեն, ներդրումային բարենպաստ միջավայրը ներքին ինվեստորի համար եւ սփիւռքից եկած միջոցների կուտակումն (ստերիլիզացիան) ու Հայաստանի զարգացմանը ծառայեցնելը:

- Փաստօրէն սփիւռքը մեզ չի կարողանում օգնել:

- Այսպէս կ'ասէի. Չենք կարողանում այդ օգնութիւնը ստանալ: Յիշում էք միջնադարում, երբ Ամերիկայից ոսկին սկսեց հոսել դէպի Իսպանիա: Այս երկրում ամէն ինչ թանկացաւ եւ տնտեսութիւնը կազմալուծուեց: Շուտով (1588 թ. յետոյ) Իսպանիան Եւրոպայում տնտեսական առաջատարի դերը զիջեց Անգլիային, Հոլանդիային, Ֆրանսիային եւ այլն: Նոյնը մեզ համար սփիւռքից եկած փողն է: Այդ օգնութեան վրայ է հաշուարկած ՀՀ-ում մենաշնորհային կլանների գործունէութիւնը: Ներկրումների միջոցով նրանք այդ փողը քաշում են մարդկանց ձեռքից: Սա ՀՀ-ում այսօր միակ իրական բիզնէսն է: Կառավարութիւնն էլ սրանց օգնում է՝ արժեւորելով դրամը: Ասենք, կառավարութիւնը նոյն այս մարդիկ են: Այսպիսով, սփիւռքի պատճառով մենք դարձել ենք ներմուծող, պարագիտային երկիր: Եթէ սփիւռքը չլինէր՝ մենք արտահանող ու զարգացող երկիր կը լինէինք: Կամ էլ պէտք է լինի ժողովրդական մի իշխանութիւն, որը կարողանայ սփիւռքից եկած միջոցները ծառայեցնել ՀՀ զարգացման նպատակներին:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԸՇՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Bedros S. Maronian 818/500-9585 Siamanto B. Maronian 818/269-0909 SERVING THE COMMUNITY SINCE 1975 More locations and more ways to service your insurance and financial needs 6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048 805 East Broadway Glendale, CA 91205 300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101 Life Insurance, Health Insurance, Group & Individual, Long Term Care, Disability, Estate Planning, Will & Living Trust, Full Annual Review, Mortgage Protection, College Planning, Workman's Compensation, Employee Benefits, Annuity, IRA, 401K & 403B A.B.A. INSURANCE SERVICES Insurance coverage can help you financially! Ապահովագրութիւնը Աճիրաճեղս է Coverage & Protection should be on the top of your priority list.

ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ ԱՐՈՒԵՍԱԳԷՏՆ ՈՒ ԻՐ ԱՐՈՒԵՍԸ (15 Ապրիլ 1904 - 21 Յուլիս 1948)

ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԱՆ

ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ - Գեղանկարներու յետահայեաց ցուցահանդես
ՎԱՅՐ - Ժամանակակից Արուեստի Թանգարան (Museum of Contemporary Art/M.O.C.A.), 250 S. Grand Ave., Los Angeles, CA 90012
ԵՐԲ - 6 Յուլիսի 20 Սեպտեմբեր 2010, ամէն օր բացի Երեքշաբթի-Չորեքշաբթի օրեր, ժամը 11էն սկսեալ
ՄՈՒՏՔ - \$10, ուսանող (I.D.Ս) կամ երեք \$5, Գինգաբթի երեկոյ ժամը 5-8՝ մուտքը ազատ
ԳեՆԱԿԱՊ - (213) 626-6222, կայքը՝ www.moca.org

Իր ստեղծագործութիւններու յետահայեաց ցուցահանդէսին առիթով, լրսանձեւ լրսահայ մամուլն ու հեռուստակայանները բազմիցս անդրադարձան ամերիկահայ հանճարեղ գեղանկարիչ Արշիլ Կորքիի կարծ, փոթորկոտ, տառապալի բայց բեղուն կեանքին ու գործին: Վեր առին յատկապէս Հայոց Յեղապանութեան եւ յետ-եղեռնեան տարիներուն հետ համընկնող իր կենսագրութեան ողբերգական դրուագներն ու եղերական վախճանը: Իմ կարծիքով, սակայն, բաւարար ամբողջականութեամբ դեռ փորձ չեղաւ՝ ժողովրդականացման նպատակով մամուլի էջերէն եւ հեռուստացոյցով, գէթ ուրուագծային բնութագրումը տալու ամերիկեան արդի գեղանկարչութեան մեծագոյն յառաջապահի կերպարուեստին - եթէ նկատի չառնենք երբեմն անխառն, երբեմն ալ որոշ սարդասացութիւններով խառն աշխուժութիւնը որ արտայայտուեցաւ արուեստասէր ոչ-հայ որոշ հասարակութեան մը եւ արուեստի քննադատներու կողմէ:

Յուցահանդէսին ներկայացուած գործերէն մեկնելով, հոս մեր նպատակն է լայն գիծերով եւ ամփոփ բնութագրութեամբ ուրուագծել Արշիլ Կորքիի - ծննդեան անունով՝ Ոստանիկ Մանուկի Ատոյեան - արուեստը, անոր ակունքները, եւ գրաւած տեղը՝ համաշխարհային գեղանկարչական արդի շարժումներու եւ ժամանակակից հոսանքներու պատմութեան մէջ:

Պատկերասրահի յատկացուցած 14 սենեակներու մէջ ժամանակագրական հանգրուաններով խմբուած են Արշիլ Կորքիի 73 իւղանկարները, 49 գծանկարները եւ հայկական գութանի փայտէ 3 գողտրիկ քանդակները: Մօտաւորապէս 1920ականներու սկիզբէն մինչեւ 1940ականներու

ընթացքին ընդգրկող ստեղծագործութիւններուն հետեւելով սենեակ առ սենեակ, այն զարմանալի տպաւորութիւնը կ'ունենամ թէ կը հետապնդեմ անխոնջ եւ անսպառ ներաշխարհով հոգի մը որ իր ճշմարիտ ու հարագատ ինքնութիւնը կ'որոնէ տազնապահար: Այն տպաւորութիւնը կ'ունենամ թէ մէկ առ մէկ կ'անցնիմ տարբեր կամ մոլորչներու վրայէն՝ լոյսին հանելու համար ներքին անսպառ հարստութեամբ բեռնաւորուած այդ հոգիի կեանքի տարբեր ժամանակներուն ծաղկած արուեստի ոճաշխարհը: Տարածութեան եւ ժամանակի ուղեւորմամբ, այդ կամուրջները զիս փոխնիփոխ կը տանին քսաներորդ դարու առաջին կէսի գեղագիտական կարեւորագոյն առույգ ու կենսայորդ հետազօտութիւններուն, գեղանկարչական վերափոխիչ յեղաշրջումներուն, բայց նաեւ օրհասական անտանելի ողբերգութիւններուն եւ անոնց սպանիչ անհաշտելի, անվերժանելի չուշերու ցմահ յաճախանքին որոնք կոփեցին ու կերտեցին Արշիլ Կորքիի կեանքն ու արուեստը: Այլ խօսքով, գեղարուեստական ստեղծագործութեան ողջ ընթացքը սերտօրէն միահիւսուած է ոչ միայն իր ժամանակի արուեստի պատմութեան հետ, այլ նաեւ, գուցահեռաբար, իր ժողովուրդի եւ հարագատներու, յատկապէս մօր դաժան ճակատագրին եւ յուշերուն հետ: Մինչեւ իր եղերական մահը:

Սկսելով մայր մուտքէն՝ Ժամանակակից արուեստի թանգարանի կորքիական ցուցահանդէսի առաջին բաժանմունքը, ներառեալ 5 սենեակները եւ միջանցքէն անդին առաջին սենեակը, աչքի կը զարնէ սկզբնական ժամանակահատուածի գլխաւորաբար տպաւորապաշտ ու քիւպիստական իր խանդավառ փորձարկումներով, ինչպէս նաեւ այլ ստեղծագործութիւններով: Տպաւորապաշտութիւնը (impressionism), 19րդ դարու վերջին քառորդէն սկսեալ, կը նպատակադրէր ճշգրտօրէն վերլուծել գոյներու ներդրանակ երանգաւորումը՝ ձգտելով հարագատօրէն տալ լոյսի խաղերը իրերու մակերեւոյթին վրայ: (Մոն, Ռենուար, Սեզան, Տէկա, Եւալին): Թէեւ մասնակիօրէն, քիւպիզմի ազդեցութիւնը տակաւ փոխարինեց տպաւորապաշտութիւնը Կորքիի գործերուն մէջ: Վերացական բազմաթիւ ուղղութիւններու ծնող՝ քիւպիզմը ֆիքսացիոյ եւ Պրաքի առաջնորդու-


թեամբ կը մերժէր տպաւորապաշտներու ջատագոված լոյսի մակերեսային զուտ տեսողական դերը, եւ գայն կը փոխարինէր ձեւի ու գոյնի աւելի բանական հասկացողութեամբ: Իրերը ներկայացնելու տեղ այնպէս ինչպէս կը թուին՝ քիւպիզմը տպաւորապաշտութեան կը հակադէր իրերու կառուցուածքն ու դիրքը առաւելագոյն ամբողջականութեամբ տալու եղանակը՝ համատեղելով առարկայի շարք մը դիրտակէտերը: Ահա այսպիսի ներշնչումով է որ Արշիլ Կորքի ստեղծագործեց «Կագմութիւն» (1933-36) եւ «Յօրինուածք» (1936-39) իւղանկարներն ու շարք մը վերացական նաթիւրմօրթեր ու գծանկարներ: Ասոնք քիւպիստական իր լաւագոյն գործերէն են: Այս շրջանին, սակայն, իր հետաքրքրութիւնը սկսաւ հեռանալ քիւպիզմի ընձեռած գուտ տարածական վերացականութենէն՝ ուղղուելու համար Միրօյի եւ իր սեփական ոճով կենսատիպ-օրկանական պատկերումի վերացականութեան: Ասիկա իր արտայայտութիւնը գտաւ բազմաթիւ գծանկարներով, «Գիշերը», Աւեղծուած ու Կարօտաբաղձութիւն» (1931) անթամատիտի-մելանի գծագրութեամբ, եւ մանաւանդ «Խորգոմէն Ետք» (1940-42) իւղանկարով: Այս վերջին գործերուն մէջ արդէն սկսած էր գերակայել գերիրապաշտութիւնը (surrealism): Որպէս ամերիկեան վերջին ու մեծագոյն գերիրապաշտը, Արշիլ Կորքի հարկադրուեցաւ օգտագործել այնպիսի վայրագ կենսատիպ վերացականացումներ ինչպէս անդամահատուած թռչուններու գլուխներն ու վիզերը՝ պատկերաւոր արտայայտութիւն տալու համար այնպիսի երեւոյթներու, ինչպէս ամերիկեան դրամատիքութեան գիշատիչ մրցակցութեան արտառոցութիւնները կամ Վանի ինքնապաշտպանութեան յուշերէն յամեցող թրքական բարբարոսութիւններու անջնջելի մղձաւանջները: Ասիկա կը նշանակէ թէ Կորքիի գերիրապաշտ մտածելակերպն ու կերպարուեստը իրականութենէն բխող վերացական կամ կիսավերացական բնույթ ունին: Նոյն կարելի է ըսել իր անցեալէն, մանկութենէն, հայրենիքէն, անցեալի արհաւիրքներու կսկիծներէն, կարօտէն ու երագներէն իր ստեղծագործութիւններուն - նոյնիսկ նաթիւրմօրթերուն - փոխանցուած գերիրապաշտ վերացական մօթիֆներու առնչութեամբ:

Վերի առաջին բաժանմունքին

մաս կը կազմէ նաեւ «Արուեստագետը եւ իր Մայրը» շարքը (1926-36)՝ չորս իւղանկարներով ու հինգ գծանկարներով: Կորքի ամբողջ տամամեակ մը աշխատեցաւ ասոնցմէ ոմանց վրայ: Նկարչական արուեստի գերագայուն ըմբռնումով ստեղծուած այս հոյակապ գործերը աշխատեցուած են դասական կերպարուեստի վարպետներու յատուկ կատարողական բացառիկ բծախնդրութեամբ ու կատարելութեան համբերատար հետապնդումով: Յղկուած տարածքներ, ածելիի շեղբով կրկին ու կրկին հարթուած մակերեսներ, տեսիլքի մը շղարշով թաքնուած մանրամասներ, հագիւ ձեւ առած ու դեռ շօշափման ու շարժման կարողութենէ զուրկ թաթիկներ՝ կարծես ուրիշ աշխարհի մը պատկանող: Կերպարուեստի պատմութեան մէջ դժուար է գտնել այլ ստեղծագործութիւն մը որ կատարողական այսքան երկար ու տենդագին աշխատանքով մարմնացած սէր, խանդաղատանք, կսկիծ ու կարօտ ամփոփած ըլլալ մօր մը համարեա սրբանկարին մէջ:

Յուցահանդէսի երկրորդ գլխաւոր բաժանմունքը գոյգ սենեակ է որ կը պարունակէ «Ինչպէս Մօրս Ասեղնագործուած Գողտցիին Մալքերը կը Բացուին Կեանքիս մէջ» (1944) վերացական գերիրապաշտ առաջնակարգ իւղանկարը, գծանկար ուսումնասիրութիւն մը «Լեարդը Աքաղաղի Կատարն է» գործին համար (1943), եւ այլն: Զոյգ սենեակներէն մէկը նախատեսուած էր պարունակելու Կորքիի հաւանաբար ամենէն կոթողական գերիրապաշտ գլուխ-գործոցը՝ «Լեարդը Աքաղաղի Կատարն է» (1944) իւղանկարը՝ 250 սմ լայնx185 սմ բարձր: Նկարին սեփականատէրը՝ Պաֆլը Քաղաքի Ալպարայթ-Նաքս Արուեստի Պատկերասրահ, նախապէս յօժարած էր գայն փոխ տալ ձեռնարկի սկզբնական կազմակերպիչ Ֆիլատելֆիայի Արուեստի Թանգարանին, ուր անցեալ Հոկտեմբերին ներկայացուեցաւ ցուցահանդէսին մէջ: Մեզ համար անհամոզիչ պատճառաբանութիւններով, սեփականատէրը մերժեց գեղանկարը նոյն ձեւով փոխ տալ նաեւ Լոս Անձելըսի Ժամանակակից արուեստի Թանգարանին՝ Գալլիֆօրնիայի բնակչութիւնը, ներառեալ հայ գաղութը, գրկելով անոր վայելքէն: Որքան ալ ուզենք դաւադրութեան կարելիութիւնը բացառել ասոր ետին, դժբախտաբար կարելի չէ ամբողջ-

Մար.ք էջ 18



Ինքնադիմանկար (1928, իւղանկարի կտավի վրայ)



Լեարդը Աքաղաղի Կատարն է (1944, իւղանկարի կտավի վրայ)



Արուեստագետի և Մայրը (1938, ածխամատիտի թուղթի վրայ)

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱՐՄԵՆ ՂԱՐԻՊԻ «ՅՈՒՇԵՐՈՒ ԲԱԳԻՆ» ՀԱՏՈՐԻՆ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Նոր Սերունդ Մշակութային Միութեան նախաձեռնած ներկայ շնորհանդեսին, մեր քննարկման նիւթն է լիբանանահայ ազգային-հասարակական ծանօթ հնչակեան գործիչ, բազմալատակ կրթական մշակ եւ յախուռն հրատարակախօս Արմէն Ղարիպի անդրանիկ, այլ իր վաղաժամ մահով վերջին գիրքը հանդիսացող «Յուշերու Բագին» յուշագրական ներկայ գործը:

Գիրքը լոյս տեսած է 2009 թ., Պէյրութ, հեղինակին մահէն 19 տարի ետք: Իր մեկենասութեամբ լոյս տեսած ներկայ հատորը՝ Տօքթ. Գրիգոր Գրիգորեան ձեռնած է իր հօրեղբոր Գրիգոր Գրիգորեանի լի-շատակին:

Չեւ ու խորքով, մաքուր, ինամեայ եւ հարուստ բովանդակութեամբ 335 էջերու վրայ տարածուող այս հրատարակութիւնը, իր մէջ կ'ամփոփէ երկու բաժիններ:

Առաջինը՝ էջ 9-էն 45 - առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, ինչպէս նաեւ քսաներորդ գլուխները, առաւելաբար կը պատմեն իր անձնական կեանքի գանազան փուլերուն մասին, ինչպէս, «Իմ Ծնունդս եւ Մանկութիւնս», «Մանկութիւնս՝ Սուրբոյ Մայրաքաղաքին մէջ», «Յաջողութիւններու Փառատունը», այդ շարքին վրայ՝ «Հայ Դպրոցներու Ծառայութեան Մէջ», «Կուսակցական եւ հասարակական գործունէութիւնս» եւ «Ամուսնութեանս Իրողութիւնը»:

Երկրորդ բաժինը կը պարունակէ տասնինը գլուխներ, որոնք լուսարձակի տակ կ'առնեն մօտաւորապէս վերջին մէկ դարու, մեր ազգային, եկեղեցական, քաղաքական, կուսակցական եւ տեղական

անցուղարձերը: Այս անկիւնէն մօտենալով, արդարեւ, կը գտնենք, թէ «Յուշերու Բագին»-ի գլխաւոր առանցքը կը կազմէ ոչ թէ իր կենսագրութիւնը, ինչպէս կ'արձանագրէ հեղինակը, այլ՝ 19 գլուխներու վրայ տարածուած մօտաւորապէս մէկ դարու մեր ազգային, քաղաքական, կուսակցական, տեղական անցուղարձերը, որոնք վերլուծման կ'ենթարկուին նոյնինքն իր կողմէ:

Ի դէպ, Ղարիպ, իր երեխայ-րիք՝ «Յուշերու Բագին»ը ձեռնած է Հնչակեան Կուսակցութեան հարկւրամեակին, «առ ի երախտագիտութիւն անոր ազգային-ազատագրական մաքստումներուն եւ անոր կրկն-սին մէջ ինկած մարտիրոս առաքեալներուն»:

Վերադառնալով գրքին վեց գլուխներուն՝ անոնք, միանշանակ, կը բաղկանան ինքնակենսագրական սեղմ պատմումներէ, ատենագրական զեկոյցներէ, ընդհանրապէս շեշտը դնելով Հ.Մ.Մ.ին, կուսակցական ծառայութիւններուն, իր կազմակերպած ձեռնարկներուն եւ իր ընձեռած՝ դէպի Պաղեստին, Հայաստան եւ Ամերիկայ ճամբորդութիւններուն վրայ:

Ղարիպ ծնած էր Մերսին քաղաքի մէջ, 15 Օգոստոս 1915-ին, հայազգի «պատմութեան ամէնէն «գազրելի», «մուսլ օրերուն», ինչպէս պիտի բնութագրէր ան: Անոնք, այդ դառն օրերը աննշմար թաւալել էին իր անգիտակից նայուածքներուն տակ: Բարեբաղդ պայմաններու տակ գաղթել էին Դամասկոս, ուր «Մանկութիւնս չտեսած, անգիտակից տարիները» շարունակել էին աճ արձանագրել, զուրկ՝ մասնա-

Շարք էջ 16


ԱՐՄԵՆ ՂԱՐԻՊԻ »ՅՈՒՇԵՐՈՒ ԲԱԳԻՆ« ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Շարունակուած էջ 1-էն

Երեկոյի բացումը կատարեց Ն.Ս.Մ.Մ.ի վարչութեան ատենապետ եւ օրուան հանդիսավար Յարութ Տէր Դաւիթեան: Ան իւրաքանչեւ ձեւով ներկայացուց Արմէն Ղարիպի անձը, տիպարն ու կերպարը որպէս հմուտ մանկավարժ եւ վարչական ու հասարակական բազմաթիւ կարողութիւններով օժտուած անձնաւորութիւն մը:

Արմէն Ղարիպի կեանքն ու գործը համապարբակ կերպով ներկայացուց իր երբեմնի գործընկերներէն Հ.Մ.Մ.ի Կեդրոնական վարչութեան նախկին ատենապետ՝ Տիգրան Սարաֆեան: Իր տուած կենսագրական ծանօթութենէն կ'իմանանք թէ Արմէն Ղարիպ՝ աւագանի անունով Նազարէթ Ղարիպեան, ծնած է 1915ին, Կիլիկիոյ Մէրսին քաղաքին մէջ: Նախակրթութիւնն ու բարձրագոյն ուսումն ստացած է Դամասկոսի մէջ: Ապա Լիբանան փոխադրուելով վարած է ուսուցչական պաշտօններ: Եղած է սնօրէն Ազգային Ռուբինեան վարժարանի ապա հիմնած է իր տարիներու մեծ երազն եղող սեփական կրթական հաստատութիւնը՝ Նոր Բարձրագոյն վարժարանը, որ յետագային հանդիսացաւ լիբանանահայ գաղութի լաւագոյն դպրոցներէն մին:

Տիգրան Սարաֆեան առանձնապէս անդրադարձաւ նաեւ Արմէն



Տօքթ. Արշակ Գազանճեան

րիպի գիրքը լոյս տեսած է 2009ին, մեկենասութեամբ՝ Տօքթ. Գրիգոր Գրիգորեանի: Խնամեայ ու հարուստ բովանդակութիւն ունեցող այս հրատարակութիւնը կը բաղկանայ 335 էջերէ: Արմէն Ղարիպ «Յուշերու Բագին»ը ձեռնած է Հնչակեան Կուսակցութեան 100-ամեակին:

Գիրքը կը բաղկանայ վեց գլուխներէ, ուր ընթերցողը կը ծանօթանայ հեղինակի ինքնակենսագրութեան սեղմ պատմումներուն, ատենագրական զեկոյցներուն, Հ.Մ.Մ.ին, կուսակցական ծառայութիւններուն եւ դէպի Պաղեստին, Հայաստան եւ Ամերիկա կատարած ուղեւորութիւններուն:

Ա. Ղարիպ իր ուսումնասիրած ազգային, եկեղեցական, քաղաքական, կուսակցական եւ տեղական բնոյթի պատմական դէպքերը կը վերլուծէ ուրոյն մեթոտով:

Ղարիպ իր տարածուն եւ քննարկման նիւթ կը դարձնէ Կիլիկիոյ թագաւորութեան անկումը, Մեծ Եղեռնը, կայսերապաշտութիւնը, Նոյեմբեր 29, 1920ին տեղի ունեցած Հայաստանի Խորհրդայնացումը, Ներգաղթը, Կաթողիկոսական տագնապը, 1958ի եղբայրասպան կոիւնները: Լուրջ քննարկման նիւթ դարձուցած է նաեւ ներգաղթը իր դրական եւ բացասական կողմերով:


Իր եզրակացութեան մէջ Տօքթ. Ա. Գազանճեան յարեց. «Օգոստոս, կառուցողական, պատմագիտական եւ փորձառական հարուստ գիտելիքներով յղբացած հեղինակութիւն մըն է Արմէն Ղարիպի «Յուշերու Բագին» ներկայ հատորը, որուն թելադրելի ընթերցումը կը կատարուի հաճութեամբ եւ շահեկանութեամբ»:

Վասն վերջաբանի ենթախորագրի տակ Արմէն Ղարիպի հանգուցեալ տիկնոջ ուղղած «Երբ չկայ դուստրն այլեւս ի վերայ մեր մոլորակի» սրտայոյց գրութիւնը կարդաց Լենա Մանուկեան:

Երեկոյի աւարտին հետաքրքրական յուշերով հանդէս եկան Արմէն Ղարիպի նախկին սաները:

Վերջաւորութեան ընտանիքի անունով սոյն միջոցառումը կազմակերպողներու եւ ելոյթ ունեցողներուն շնորհակալութիւն յայտնեց Արմէն Ղարիպի անունը կրող կրտսերն Արմէն Ղարիպեան:

Այնուհետեւ տեղի ունեցաւ գինեձօնի աւանդական արարողութիւնը, որուն յաջորդեց հիւրասիրութիւն:



Տիգրան Սարաֆեան

Ղարիպի հասարակական բեղուն գործունէութեան վրայ թէ որպէս Հայ Մարմնամարզական Միութեան վերակազմակերպման գործին մեծ աստարող մը, վարչութեան նախագահ եւ թէ որպէս Լիբանանի Սոց. Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կարկառուն ղեկավարներէն մին: Իր նկարագրի առանձնատկութիւններէն եղած են, կազմակերպական նախաձեռնութիւնները, հետեւողական աշխատանքները, միջ-համայնքային եւ լիբանանեան պատերազմի օրերուն ցուցաբերած ազգօգուտ քաղաքականութիւնը, պարկեշտութիւնը, ծառայասիրութիւնն ու հայրենասիրութիւնը:

Արմէն Ղարիպի «Յուշերու Բագին» հատորը ներկայացուց «Մասիս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեան: Ան անդրադառնալով այս հատորին յարեց. Լիբանանահայ ազգային-հասարակական ծանօթ հնչակեան գործիչ, բազմալատակ կրթական մշակ եւ յախուռն հրատարակախօս Արմէն Ղա-



ԴԱՄԱՍՍԱԿԱՆ ՀԱՐՁԱԶՐՈՅՑ

ԲԺԻՇԿ ԳԱԳԻԿ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ

ՆԻԻԹ՝

ԾՆՈՂՔ-ԶԱԽԱԿ ՓՈԽ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ՝

Հ.Մ.Մ.-Ի Տիկնաց Միութեան

Տեղի կ'ունենայ՝

Ուրբաթ, 10 Սեպտեմբեր 2010
երեկոյեան ժամը 8:00-ին

Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահէն Գերս
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ – ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

ՕՐՈՒՄՆ ԴԱՅԱՆՋԵՐ

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Յառաջիկայ Նոյեմբեր 8,9,10 շաբաթակիցներին, Երուսաղեմի Սուրբ Յակոբայ Միաբանութիւնը պիտի ունենայ Միաբանական Ընդհանուր Ժողովը, որուն պիտի մասնակցին բոլոր միաբանները, ներքին եւ արտաքին:

Միաբանութեան ընդհանուր թիւն է 38 հոգեւորական, ի գլուխ ունենալով Պատրիարք Հայրը, ինը արքեպիսկոպոստներ, եւ 28 վարդապետներ եւ արքեպիսկոպոստներ:

Թէ քանի՞ հոգեւորական պիտի բերէ իր մասնակցութիւնը Նոյեմբերին գումարուելիք այս խիստ եւ անհրաժեշտ միաբանական ընդհանուր ժողովին, չենք գիտեր:

Բազմաթիւ լուրջ հարցեր կան լեռնացած պատրիարքութեան օրակարգին վրայ, որոնք Պատրիարք Հօր յառաջացած տարիքին եւ անկարողութեան մատնուած ըլլալուն պատճառաւ, անդամալուծած են հաստատութեան գործերը: Անպառուսակ իրավիճակ մը կը տիրէ վանքէն ներս: Գրած ենք անցեալին եւ ամենայն պատասխանատուութեամբ կը կրկնենք այսօր ալ, խեղճութիւն, թշուառութիւն, ծուլութիւն, անհոգութիւն, անհամբերաշխութիւն, բանբասանք, պատասխանատուութեան գիտակցութեան պակաս... դժբախտաբար արմատ նետած են վանքի անմիաբան միաբանութեան «հոգեւոր կեանք»էն ներս:

Սա առաջին անգամ էր, որ տեսնում էի այնքան կարդացած ու պատկերացրած մեր Մասիսը: Երեւի փորձով գտած կը լինէք որ մի որեւիցէ նիւթի մասին երբ որ ձեզ շատ է խօսուում ու գովաբանուում, երբ դուք արժանանում էք այդ բանի տեսութեան, հրասթափուում էք. օրինակ՝ ձեզ ասում են որ այսինչ շարժանկարը գլուխ գործոց է, հիւանալի է եւ այլն, երբ անձամբ գնում եւ տեսնում էք, մի ձեւ հրասթափու-

թիւն էք գգում, ինչու, որովհետեւ մարդկային ուղեղը ունի աւելի ուժեղ երեւակայութիւն իրականութեա մասին, քան ինքը իրականութիւնն է:

Ինձ հետ երկու դէպք պատահեց որոնք ունեցան լրիւ հակառակ ազդեցութիւն, այսինքն երկու նիւթի շուրջ լսել էի գովասանքներ, բայց երբ անձամբ տեսայ, բացի այն որ հրասթափեցուցիչ չէր այլ եւ ընդհակառակը, աւելի տպաւորիչ էր. այդ նիւթերն էին, առաջինը, Մասիսը եւ երկրորդը Վատիկանի Ս. Պետրոս տաճարը:

Երբ խորը եւ առանց զգացմունքի սկսում ես ուսումնասիրել, քիչ թէ շատ գտնում ես պատճառը թէ ինչու է, որ այս սարը մարդկային պատմութեան ամենահին ժամանակներից սկսած մինչեւ մեր օրերը շարունակ եւ ամէն առիթով լինել է թէ մեր եւ թէ օտար ազգերի պատմութիւնների մէջ: Սա մի լեռնաշղթայի մի բարձր գագաթը չէ ինչպէս Մօն-Բլանը Ալպի, կամ Էլբրեստը Հիմալայի, այլ իր շրջապատը գրեթէ հարթ է, ոչ մի բարձր լեռ չկայ, եւ երկրորդ իր փէշերը շատ լայն են տարածուած. այսինքն, երբ դիտում էք Արեւմտեան Հայաստանից, հորիզոնի ծայրագոյն ձախից սկսում է Մեծ Մասիսի փէշը եւ հորիզոնի ծայրագոյն աջում վերջանում Փոքր Մասիսի փէշը: Իսկ ամենատպաւորիչն այն է, որ Մասիսի այն մասը ուր սարը միանում է գետին գրեթէ միշտ անտեսանելի է մշուշի ու ցած իջած ամպերի հետեւանքով, իսկ այդ ամպերը երբ վեր են բարձրանում, այդ միացման մասը քիչ թէ շատ բնորոշել կարելի է լինում, իսկ ինքը լեռը ծածկուած է:

Այդ վայրից մինչեւ Էրզրում գրեթէ միշտ Մասիսը մենք տեսնում ենք: Մեր ճամբորդները շարունակ նրա մասին են խօսում եւ կարծիքներ յայտնում: Իսկ մեքենավարը առանց գիտնալու մեր (կինս եւ ես) հայ լինելու հանգամանքը, ճամբորդներին բացատրում է այդ սարի մասին, թէ ինչպէս Նոյի Տապանը դրա վրայ է գտնուում եւ դա պատկանում էր հայերին եւ ամէն մի հայ դրան սուրբ է համարում, ու եթէ առիթը ներկայանալ պատրաստ է իր կեանքի գնով այդ սարը հետ վերցնելու:

Այդ յուզիչ եւ ճշմարիտ բացատրութիւնը, մի պարսիկի կողմից շոյում է իմ ազգային հպարտութիւնը: Պիտի սակ որ պարսիկ ազգը ունի բարձր մշակույթ, գեղարուեստ ու ճարտարապետութիւն իրաւացիորէն շատ բարձրից է նայում տաճիկին: Պարսիկը ընդհանուր առմամբ հիւրասէր է եւ չատկապէս հայասէր, այդ հայասիրութիւնը շատ լաւ կարելի է նկատել:

Պարսկականի մասում պաշտօնեաները ունեն իրենց համագրեւորները, բայց ոչ մի գէնք չեն կրում, այս մասում դրուած է թագաւորի նկարը, իսկ միւս բաժնում, թրքականում, պաշտօնեաները նոյնպէս համագրեւորով են եւ արտակարգօրէն զինուած, իսկ պատի վրայ երեւում է Մուսթաֆա Քեմալի պատկերը, որ ամբողջ ճամբորդութեան ընթացքում, ամէն տեղ, ամէն առիթով չափազանցուած հանգամանքներում նկատեցի:

Երբ հերթը ինձ հասաւ թուրք պաշտօնեայ սպային տուի անցագիրս, սպան, որ խօսում էր բաւական անգլերէն, երբ անցագիրս թղթա-

տելով անունս կարդաց եւ պարզուեց իր համար իմ հայ լինելս, մեծ ու ծանր կնիքը վեր բարձրացնելով այնպէս թափով իջեցրեց անցագիրս վրայ որի ձայնից բոլոր ներկաների երեսները դէպի մեզ դարձան:

Երկար եւ մանրագնիչ ստուգումներից յետոյ վերջացած են համարում իրենց պարտականութիւնը եւ մեզ առաջնորդում բակը (թրքական մասը) ուր սպասում ենք մեր հանրակառքին: Բաժանող պատի մօտ կանգնած խօսում ենք ճամբորդների հետ զանազան նիւթերից, մէկը որ բաւական կրթեալ էր երեւում իմանալով մեր հայ լինելը սկսեց բացատրել, թէ եթէ դուք գանգատ ունէք որ թրքերը տիրացել են ձեր հողերին, մենք էլ բողոք ունենք որ նրանց ուզում են տիրանալ մեր գրական մեծ տիրաններին, իրենց դպրոցներում ասում է որ Սաադին, Օմար Խալիֆը, Հաֆէզը եւ մինչեւ անգամ Ֆէրդուսի թուրք են եղել... այն ժամանակուայ պարսիկ թագաւորները դրամի միջոցով դրանց տարել են իրենց մօտ եւ պարսիկ յայտարարել:

Նստելով մեքենան շարունակում ենք մեր ճամբան, ճանապարհը ուղղակի Մասիսի լանջի վրայով է գնում, երկինքը պարզ է, յստակօրէն երեւում է Մասիսի գագաթը ուր մի փոքր ամպ է հաւաքուած միայն ամբողջ երկնքում, հեռուում երեւում են քիւրտ հովիւների սեւ այծի մորթուց պատրաստուած օբաները, մտածում եմ թէ ահա այս սարի միւս կողմն է մեր Հայաստանը, հայ ժողովրդի պաշտամունքի առարկան, բայց յանկարծ ինքս ինձ հարց եմ տալիս թէ այս ճանապարհը որ մեզ տանում է Էրզրում ու Ղարաբաղի սահման այս դաշտերը, այս ամպի վայրերը միթէ մերը չե՞ն, միթէ սա Հայաստան չի՞ որ մի օր մերն է լինելու, իր տիրոջն է սպասում որ էլի ծաղկի ու բարգաւաճի:

Գիշերը հասնում ենք մեր փոքր քաղաք, կարծեմ Էրզրում, առաւօտը շուտ ճանապարհուում եւ մի քանի ժամից մտնում ենք Էրզրում քաղաքը:

Առաջին տպաւորութիւնը որ ստանում եմ կարծես դա մի քաղաք է որի բնակչութիւնը հեռացել է իր տեղը թողնելով զինուորների, բաւի բուն իմաստով մի զինուորական քաղաք ուր նայում ես տեսնում ես զինուորական համագրեւոր սպաներ, զինուորներ, բարձրաստիճան պաշտօնեաներ: Քաղաքը գտնուում է ոչ նախանձելի վիճակի մէջ, փողոցները կեղտոտ են ու փոշոտ, շէնքները շատ հին եւ եւ անուշադիր թողուած, հատ ու կենտ աչքի են զարնում մի քանի յարկանի նոր շէնքեր որոնք կառավարական պաշտօնեաների գրասենեակներն են, բայց որոնց գիշերով նայելուց անկանոն ու անփոյթ շարուած աղիւսների արանքից կարող են տեսնել ներսում վառուղ լոյսը:

Մեր հանրակառքը կանգ է առնում միակ հրապարակում մի մեծ շէնքի առաջ, որ կոչում է «Ամնիեաթ»: Մեզ առաջնորդում են ներս, ուր մեր ձեռքից վերցնում են անցագրերը ու խստիւ պատուիրում, որ որեւիցէ վայր լուսնկարները արգիւրուած է:

Նախ քան թեհրանը թողնելը, մի բարեկամ Էրզրումում մի խանութի հասցէ էր տուել եւ ինձ յայտնել, թէ այդ խանութպանի միջոցով կարող եմ կապ հաստատել Էրզրումում բնակող միակ հայու հետ, որ կարող է ինձ օգտակար լինել: Համաձայն բարեկամիս պատուէրին, հարց ու փորձով, իմ չզիտոցածս թրքերէնով, գտնում եմ խանութը, ներս մտնում ու յայտնում

թէ այս ինչ անհատին եմ ուզում հանդիպել, քիչ յետոյ յայտնուում է հայրը, որ անուշը ոչինչ ունէր հայկական, իսկ ինքն էլ գրեթէ հայերէն չի խօսում, բայց մի քիչ հասկանում է. մենք մեր խօսակցութիւնը շարունակում ենք անգլերէն: Իրեն յայտնում եմ թէ մտադիր եմ ճամբաս շարունակել երկաթուղով դէպի Պոլիս, եւ գիշերելու համար հիւրանոց եմ փնտոում: Այդ ազնիւ մարդը իր անհատական գործը թողած ինձմով է զբաղոււմ. մի խղճուկ հիւրանոցում տեղաւորուելուց յետոյ դուրս ենք գալիս երկաթուղու տոմս գնելու, երբ ուզում եմ գնալ կայարան, հայ բարեկամս քմծիծաղ է տալիս, որ ի գուր ժամանակ չկորցնեմ՝ երկաթուղու տոմսը պիտի գնել սեւ շուկայից ու ինձ խորհուրդ է տալիս, որ այդ գործի մէջ չխառնուեմ քանի որ եթէ բռնուիմ, առաջին հերթին ծեծն է գործ տեսնում (ապագայում այդ ինձ համար ապացուցուեց): Կէս ժամ չանցած նա վերադառնում է առաջին կարգի տոմսով: Օրուայ մնացեալ ժամերը միտադի ենք անցկացնում, խօսակցութեան ընթացքում պարզում է, որ Էրզրումում ներկայումս ապրում են 14 հայ ընտանիք, որոնք մեծ մասամբ թրքախօս են եւ անուններն էլ թրքական, իսկ իրենց կրօնական պարտականութիւնների համար երբեմն պատրաստ են լինում մինչեւ Պոլիս գնալու:

Առաւօտեան դէպի կայարան գնալուց տեսնում եմ մեր հանրակառքը «Ամնիեաթի» դիմաց կանգ առած, շուրջը բաւական շատ թուով մարդիկ են հաւաքուած. սկզբում այն տպաւորութիւնը թողեց, որ մի ինչ որ դէպի է պատահել, բայց հայ բարեկամս բացատրեց, թէ դրանք մեծ մասամբ տեղացի մեքենավարներն են որոնք դիտում ու հիանում են մեր հանրակառքի վրայ: Նոր անդրադարձայ որ այդ մասում գործող թրքական հանրակառքերը ինչքան խղճում արտաքին ունեն:

Բաժանում ենք լաւ բարեկամից ու բարձրանում երկաթուղին որ մեզ հասցնում է Պոլիս:

Այս քաղաքը մարդուս սքանչացնում է իր հիանալի բնութեան գեղեցկութեամբ, մաքուր օդ, սքանչելի արեւ, ոչ խոնաւ է եւ ոչ էլ չոր, ծովը եւ կանաչութեամբ պատած բլուրները մի սիրուն ներդաշնակութիւն են կազմում:

Պոլսում, մի բան որ նկատելի է, ժողովուրդը մարդուս վրայ թուրք ժողովրդի տպաւորութիւն չի թողնում, ընդհակառակը, եթէ նեղ փողոցների զարչահոտութիւնը ու կեղտը չի լինէր, կը կարծէիր թէ մի ինչ որ բալկանեան երկրում ես գտնուում, մեծ թուով շէկ ու կապոյտաչք կին ու տղամարդ են տեսնում, յետոյ ինձ բացատրեցին թէ սրանք մեծ մասամբ սերում են այն հարձերից որոնք դարեր շարունակ գողացուել են եւրոպական երկրներից՝ զարգարեու համար սուլթանների հարեմները:

Երթեւեկող մեքենաները մեծ մասամբ շատ հին են, օտար դրամանիշների պակասի հետեւանքով նոր պաթէթի ու անիւ գնելու համար ամիսներ պիտի հերթի սպասել:


Անհատական գործերս վերջացնելուց յետոյ գնեցի մի փոքր մեքենայ որ բաւական հին լինելով՝ նորոգութեան կարիքը շատ մեծ էր: Հարց ու փորձ անելուց յետոյ ինձ առաջնորդեցին այդ մասերի ամենալաւ վարպետ ու յայտնի մեքենայ նորոգող խանութը:

Ներս եմ մտնում ու անլեզու վիճակովս հասկացնում եմ միտքս,

END OF SUMMER PRICE PLUNGE

 <p>GNARLY HEAD Old Vine Zinfandel</p> <p>5⁹⁹ NO LIMIT</p>	 <p>PATRON Reposado Tequila 750ml</p> <p>29⁹⁹ LIMIT 6</p>	 <p>ROMANCE Vodka 750ml</p> <p>7⁹⁹ LIMIT 6</p>	 <p>TECATE 12 Pack Cans</p> <p>5⁹⁹ LIMIT 2</p>
<h2>LABOR DAY WEEKEND SALE</h2> <p>FRIDAY, SEPT. 3 - SATURDAY, SEPT. 4</p>			
 <p>ABSOLUT 100 Vodka 1.0L</p> <p>10⁹⁹ LIMIT 6</p>	 <p>HEINEKEN 24 Pack 12 Oz. Bottles</p> <p>19⁹⁹ LIMIT 2</p>	 <p>MGD, MILLER LITE, COORS OR COORS LIGHT 18 Pack 12 Oz. Cans</p> <p>9⁹⁹ NO LIMIT</p>	 <p>X-RATED Vodka 1.75L</p> <p>19⁹⁹ LIMIT 6</p>

 <p>GREY GOOSE VODKA ALL FLAVORS</p> <p>21⁹⁹</p>	 <p>ESPOLON TEQUILA SILVER OR REPOSADO</p> <p>19⁹⁹</p>	 <p>JACK DANIEL'S OLD NO. 7 WHISKEY</p> <p>13⁹⁹</p>	 <p>PATRON SILVER TEQUILA</p> <p>29⁹⁹</p>
 <p>CHIVAS REGAL 12 YEARS SCOTCH WHISKY</p> <p>16⁹⁹</p>	 <p>DEWAR'S 12 YEARS SCOTCH WHISKY</p> <p>14⁹⁹</p>	 <p>HENNESSY VS COGNAC</p> <p>21⁹⁹</p>	 <p>JOSE CUERVO ESPECIAL TEQUILA</p> <p>9⁹⁹</p>
 <p>CAZADORES REPOSADO TEQUILA</p> <p>19⁹⁹</p>	 <p>COURVOISIER VS COGNAC</p> <p>16⁹⁹</p>	 <p>JOHNNIE WALKER BLACK LABEL</p> <p>19⁹⁹</p>	 <p>RUSSIAN STANDARD PLATINUM VODKA</p> <p>18⁹⁹</p>

 <p>1785 E. Washington Blvd. (corner of Allen) Pasadena, CA 91104 (626) 794-7026</p>		 <p>825 W. Glenoaks Blvd. (corner of Highland) Glendale, CA 91202 (818) 242-0683</p>
<p>Hours: Mon. - Sat., 9am - 8pm Closed Sunday</p>	<p>Southern California's Premier Wine & Spirits Superstore!</p>	<p>Hours: Mon. - Sat., 9am - 8pm Closed Sunday</p>

*This ad expires on 09/29/10 • We reserve the right to limit quantities • No CCs • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.

ԱՐՄԷՆ ՂԱՐԻՊԻ «ՅՈՒՇԵՐՈՒ ԲԱԳԻՆ» ՀԱՏՈՐ

Շարունակում է 7-էն

և որ չի շատակութեան արժանի ժառանգութեան: Ղարիպ, անդրադառնալով այդ մասին, կը գրէ, թէ պիտի «սպասէր քառորդ դար, իր հասունացման շրջանը, որ սկսէր հասկնալ մանկութեան շրջանին իրեն համար անհասկնալի, մասնաարտու, դժնդակ պատահարները, իրենց տան յարկէն ներս տեղի ունեցող սրտածմլիկ խօսակցութիւնները, հասկնալ իմաստը Ապրիլ 24-ին՝ «կարենալ դիտելու եւ դատելու համար խաւարածածկ այդ տխուր եղեւնեան ժամանակաշրջանը: Միաժամանակ, կարենալ ճանչնալու համար հրէշատիպ այն ոճրագործները, եւրոպական իմբերիալիզմի յղացում Ապրիլ 24-ը եւ գայն գործադրող դահիճը՝ Թուրքիան, եւ նաեւ, ինչու՞ էջ, «անքաղաքագէտ» հայ ժողովուրդը»:

Մանկութենէն դէպի գիտակցական մակարդակը կամրջուող իր անգիտակցից կամ գիտակցական ժամանակաշրջանին սպորումները, իրենց որոշից ազդեցութիւնը ձգած են իր անհատականութեան կերտումին վրայ:

Ղարիպ իր յուշագրական պատմումներուն ընթացքին, շատ յաճախ, յառաջընթաց եւ յետընթաց չի ղողութիւններով կը մեկնաբանէ իր փոքր տարիքին չի հասկցած անձնական փորձառութիւնները: Փոքրիկ դէպքերէ ան կը հանէ հոգեբանական ընդհանրութիւններ:

Ղարիպ կը պատմէ, թէ օր մը 4-5 տարեկանին, հօրը խանութի հանգստարանին մէջ քնացած-մնացած էր: Հայրը գործէն ետք տուն էր եկած առանց իրեն, մոռացութեամբ: Մայրը սարսափած հարց տուած էր ամուսնույ, ու՞ր է նազարէթ: Թնճուկը կը լըծուի անշուշտ: Կը գտնեն գինք մթութեան եւ առանձնութեան մէջ սարսափած հոգեվիճակի մէջ, հօրը խանութէն ներս: Ղարիպ կը գրէ. «Մի խնդաք, երբ ըսեմ թէ սիրտս ուժգին կը փափախէր վախէս: Հանդարտեցայ այն ատեն միայն, երբ փաթթուեցայ մօրս վզին: Հիմնական գաղափարը հետեւեալն էր. «Տասը տարի յետոյ զգացի, կարծես թէ ոչ մէկ սէր կրնար փոխարինել մայրական սիրոյ ուժականութիւնը» (էջ 12):

Նմանապէս, կը պատմէ ան, թէ Դամասկոսի մէջ Սրբ. Թարգմանչաց վարժարանը աւարտելէ ետք, ան իր երկրորդական ուսումը կը շարունակէ Լազարիաներու գոլէճը: Հոն, յառաջադէմ ուսանող մը ըլլալուն եւ գերազանցապէս դիւթիչ ձայն մը ունենալուն շնորհիւ, եկեղեցու էրգչախումբի մենակատարը կը նշանակուի: Սէն Վենսան տը Փօլի անունը կրող իր յաճախած դպրոցի անունանկոչութեան առիթով, պատարագիչ հրաւիրուած էր Պապական Նուիրակը, Հռովմէն: Պատարագին ներկայ կը գտնուի նաեւ Բարձր Կոմիտարի տեղակալը: Անոնք, Պապական Նուիրակն ու Բարձր Կոմիտարը հմայուած ուսանող նազարէթի քեռիչ ձայնէն՝ կը խոստանան խնդրել Հռովմի քահանայապետէն, որ գինք հրաւիրէ Հռովմ, ուր ժամանակ մը ձայնամարզութեան հետեւելէ ետք դառնայ Ս. Պետրոս Եկեղեցիի երգչախումբի մենակատարը: Նաեւ՝ անոնք պիտի խնդրէին Փրանսական պետութենէն, որ հոգայ իր ուսման ծախսերը Փարիզի համալսարանի մէջ, իր նախընտրած ճիւղին ներս: Երկու պարագաներուն ալ նախապայման է սակայն, որ նազարէթ փոխէ իր կրօնքը եւ դառնայ կաթոլիկ:

Իր առջեւ բացուող այս երա-

զային առաջարկութիւնը, իր բուռն մերժումին կը բաղխի: Թունդ էր ելած իր սիրտը: Ընդվզումը խորն էր: Այս միջնադէպը առիթ կը ծառայէ նազարէթին, սահմանելու Հայաստանեայց առաքելական եկեղեցուոյ դերը հայ իրականութենէն ներս:

Իր մեկնաբանութեամբ, հայ եկեղեցին աղօթարան մը չէր պարզապէս, այլ՝ հայ ազգային դրոշմի անխորտակելի ամրոցը: Հայ եկեղեցին ինքնուրոյնութեան անհերքելի փաստն էր այս իրողութիւնը: Եղած այս շրջանցիչ առաջարկութեան՝ ուսանող նազարէթ պատասխանէ թէ «Կրօնափոխութիւնը հալելու համար ազգութեան նախներգանքն էր»: Այս պատասխանը կ'ապշեցնէ «Սէն Վենսան տը Փօլ»էն ներս իր օտար կրթական մշակները, որոնք հայերը նեղմտութեամբ կ'ամբաստանեն: Ինչպէ՞ս կարելի էր մերժել նման գրաւիչ առաջարկութիւն մը: Նեղմիտ պէտք էր համարելին այն անձը, որ կը գերադասէր իր կրօնքը, չէր ուզեր ուրանալ իր կրօնքը հասնելու համար նախանձելի դիրքի մը: Օտարագրի անբարտաւանութիւնը այս վերագրում-ամբաստանութիւնը խորը ընդվզում կը յառաջացնէ իր մէջ, ուր աւելի կը խորանայ իր ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնը, եւ հայաստանեայց եկեղեցուոյ հանդէպ տածած սէրն ու նուիրուածութիւնը:

«Հայ Դպրոցներու Մառաչութեան Մէջ» իր յուշագրական պատմումներուն մէջ, Ղարիպ իր մէջ կը պեղէ իր անհատականութիւնը: Ան կը գտնէ, թէ ինք ուրիշներու ձեռքին տակ գործելու ատակ անհատականութիւն մը չէր կրնար ըլլալ, երբէք: «Ուրիշի մը ենթակայութեան տակ պաշտօնի որպէս գրագիր, հաշուապահ, քարտուղար, թարգման՝ չէր պատշաճէր իր նկարագրի գիծերուն: Անհրաժեշտ էր ունենալ անձնական գործ մը, ուր միակ հրամայողն ըլլար ինք: Այդ մէկը՝ ան պիտի գտնէր սեփական վարժարան մը բանալու մէջ, ինչ որ կ'ընէ Պէյրութ հաստատուելէն ժամանակ մը ետք:

Նախապէս, իբրեւ ուսուցիչ, ան պաշտօնավարած էր Դամասկոսի մէջ, Հայ Աւետարանական վարժ.ի մէջ, ուր խրտչած էր մանկավարժական մեթոդներու պաղութենէն եւ կրօնական գիտելիքներու չափազանցութենէն: Անցած էր Միացեալ վարժարան 1933-1937, կուսակցական դպրոց մը: Հոն, կը գրէ ան, «ներքին պայքարները վիրաւորեր էին իր թէ՛ բնաւորութիւնը, թէ՛ խղճմտանքը:» Պէյրութի հաստատուելէ ետք, կը պաշտօնավարէ հանրածանօթ մանկավարժ, ուսուցչապետ եւ տնօրէն՝ Բենիամին Ժամիւղչեանի հովանաւորութեան տակ, Սահակեան Բարձրագոյն վարժարանէն ներս, 1937-1946, ուր որոշ փորձառութիւն ձեռք կը ձգէ, ինչ որ գինք կ'առաջնորդէ Ռուբինեան վարժարանի տնօրէնի պաշտօնին, սպա իր սեփական դպրոցը, Նոր Բարձրագոյն վարժարանը բանալուն:

Այն ինչ որ նկատուելի է Ղարիպի մօտ, այդ մէկը իր պատմելու շնորհքն է: Ան ունի պարզ, մաքուր, պատկերաւոր լեզու, առհասարակ յանդուգն լեզու: Ան իր մտածումները բոլորին հետ անվերապահօրէն կիսելու մէջ անկեղծ է: Ունի վերջապէս, ուսուցչական ոճ մը, որ ընդհանրապէս կը բացատրուի կրկնութեամբ եւ օրինակներով: Հեւքի մէջ կը պահէ ընթերցողը, որ հաճութեամբ կը հետեւի պատմումներուն եւ քննարկումներուն՝ անգամ քաղաքական բնոյթի չոր ու ցամաք հարցերուն պարզաբանման

իր տալիք պատգամին իրազեկ դառնալու համար: Սեւին սեւ՝ ճերմակին ճերմակ ըսելու յանդգնութիւնը աչքի կը գարնէ, անգամ երբ նկատողութիւն-քննադատութիւնները կ'առնջուին իր իսկ պատկանած կուսակցութեան՝ հնչակեան կուսակցութեան արձանագրած բացթողումներուն հետ, ինչպէս ցոյց կրնան տալ յետագայ քննարկումները:

Ղարիպ, իր 19 յաջորդական գլուխներու մէջ, իր ուսումնասիրած ազգային, եկեղեցական, քաղաքական, կուսակցական եւ տեղական բնոյթի «պատմական դէպքերը կը վերլուծէ քաղաքական ու պատմական ուրոյն մեթոտով: Այդ մեթոտը՝ ուրիշ բան չէր, եթէ ոչ, իր շեշտակի քննարկումներուն նշաւակ դարձած՝ «Ազգամիջեան կուսակցութեան աշխարհի դիմափոխութեան կործանարար պարագաներուն մէջ, որպէս գլխաւոր դերակատարներ, իրենց բացարձակ պատասխանատուութիւնը վերցուցած կայսերապաշտութիւնն եւ դրամատիքութիւնը»:

Վերլուծելով կայսերապաշտութիւնն ու դրամատիքութիւնը, դիտել կու տայ ան, թէ «անտնք բազմատանի ճիւղ մըն են, որոնք կրնան մէկ թաթին մէջ ձգմել ամբողջ ժողովուրդ մը, կամ փառքի գագաթնակէտին հասցնել գայն, իր հաւատարմութեան աստիճանաչափով»:

Ղարիպ նկարագրելէ ետք անոնց անմարդկային սադրանքները, կործանարար առաքելութիւնը, նաեւ դիտել կու տայ,

թէ այդ սադրանքներուն ամէնէն անհոյս աչն է, որ կայսերապաշտութիւնը հակադիր ճակատներ կը դառնայ: Այսինքն՝ կայսերապաշտներու շահերը կը բաղխին իրարու: Կը թշնամանան իրարու: Ղարիպ երկար ու սպառիչ կերպով կը բացատրէ, թէ այդ բախումն էր, որ պատճառ դարձած էր Արաջին եւ Երկրորդ Համաշխարհային պատերազմներուն: Այդ բախումն էր, նաեւ, որ հիմնական դրդապատճառներն էին հանդիսած էր հայ-թուրք դարաւոր թշնամութիւններուն: Ան էր, որ Համիտեան Չարդերուն, Տեղահանութիւններուն եւ Յեղասպանութեան ծրագիրներուն գործադրութեան ճամբուն՝ ազատ ձգած էր Կարմիր Համիտի, արիւնարբութիւնների եւ Քեմալի ձեռքերը: Եւրոպական կայսերապաշտութիւնը, որ մշտապէս դաւեց որպէս թէ դիմափոխ հայ ժողովուրդին դէմ: Ան բնաւ չներեց «Հայ ժողովուրդին, յուսահատութենէ մղուած հակեցաւ դէպի Յարական կայսրութիւնը», ինչ խօսք, որ Յարական կայսրութիւնը միայն իր շահերէն մեկնելով ինքնազավառուած էր Հայաստանի անկախութիւնը պիտի նպաստէր Միջերկրականի վրայ պատուհան մը ունենալու անոր դարաւոր քաղաքականութեան» յաջողութեան: Այս բոլորի կողքին, կը յուշէ Ղարիպ, որ հայու չի ղողութեան մէջ միշտ թարմ կը մնան հայաջինջ քաղաքականութեան ջատագովներ՝ ուսուցչականութեան եւ Իշխան Կալիցիններու՝ «առանց հայու Հայաստան» գոյատևելու հակահայ ծանօթ յայտարարութիւնները:

ազատօրէն ձեռնարկելու հայ ժողովուրդի բնաջնջման, «Առանց հայու Հայաստան» բլանի գործադրութեան: Որովհետեւ՝ Արեւմտեան իմբերիալիզմը անոր ականջին փափսած էր այդ վատ արարքին արագօրէն սկսելու հրահանգը», կը գրէ Ղարիպ:

Արմէն Ղարիպ իր ծանօթ քաղաքական մեթոտով, յանդուգն կերպով կը վերլուծէ «Պատմական Դասական օրինակները» վերնագրի տակ տեղ գտած, անգամ՝ Վարդան Մամիկոնեանի -այսպէս կոչուած- հայրենասիրութիւնը, ինչպէս նաեւ, Վասակ Սիւնիի, այլապէս կոչուած դաւաճանութիւնը. որոնք, «արդի լուսաւորեալներս, թուրքակի նման կը կրկնենք հազարհինգարիւրամեայ այդ յանկերգը»: Կը գրէ ան. «Վասակի հայրենասիրութիւնը աւելի գերակշիռ կը դատուի քան Վարդանինը: Վասակ ուզեց խնայել հայ արիւնը եւ դիւանագիտօրէն պայքարիլ Յազկերտի աշխարհակալութեան դէմ: Որոշ նուաճումներ ալ ձգած էր արդէն: Միւս կողմէ, վարդան, յուսահատ, կը փորձէր փախչիլ՝ ապականելու համար յունական կայսերապաշտութեան: Վասակ արգելք հանդիսացաւ վարդանին փախուստին ստիպելով անոր վերադառնալ հայրենիք, վերականգնելու իր մարտիկներուն պայքարի ոգին»:

Ղարիպ, միեւնոցն համարձակութեամբ, կը վերլուծէ նաեւ Կիլիկիոյ Թագաւորութեան կործանումը: Համաձայն իրեն, «Հայ ժողովուրդի անկախութեան կործանումը տեղի ունեցած է իրենց խղճմտանքը իմբերիալիզմին երեսուն արծաթի փոխարէն ծախսած դաւաճաններուն կամ յոռեգոյն պարագային՝ ուղղակի կայսերապաշտութեան վարձկաններուն կողմէ»: Կը գրէ ան. «Այդ լրտես գործակալները, հակառակ իրենց մարդկային ըմբռնումին, արիւնթիւնը պիտի չունենային ըմբոստանալու ստիպողութեան հրահանգին, քանի որ անոնք Կիլիկիոյ թագաւորութիւնը կործանելու միսիան ստանձնած էին»: Վերլուծելով մեր վերջին Լեւոնեան թագաւորութեան անկումը, կը գրէ Ղարիպ. «Ոչ միայն մեր, այլ նաեւ բոլոր տկար ժողովուրդներու պատմութիւնը կրկնութիւնն եղած է իմբերիալիստներու խաղաքարտերու յարածուն փոփոխման: «Մերը սակայն եղած է ամենէն ողբերգականը: կը շեշտենք վերոյիշեալ օրէնքներէն բխող եզրակացութիւնը, այն կայսերապաշտութիւնը մէկ կամ բազմաթիւ ճակատներով օղակուած հայ պետութեան մը քաղաքականութիւնը պէտք է ըլլար անշեղօրէն հետեւիլ ազգային շահերու պահպանումին, առանց հակելու այս կամ այն իմբերիալիզմին, որուն ոտնձգութիւններուն դէմ անհազանգի մէջ պահուին իր գինեակ ու միամտական ուժերը»: Այս բոլորի մէջ մեզի փոխանցուած՝ Արմէն Ղարիպի պատգամը հետեւեալն է. «Ողբանք մեր ազգային անկախութեան կորուստը բաց անաղարտ պահենք դառն ճշմարտութիւններ, աներկիւղ կերպով խոստովանելու կորովը»:

Ղարիպ 1895-էն մինչեւ 1921 ժամանակաշրջանը կը կոչէ «Հայ ժողովուրդի բնաջնջման մուսլ համայնապատկերը», որ սկսած է 1895-ին, Սուլթան Համիտի Չարդով, շարունակուած է 1915-ին, Իթիթի-հատ եւ Թերաքքը» Երիտ. Թուրքերու վոհմակով եւ իր լրումին հասած է Մուսթաֆա Քեմալի խորամանկութեամբ»:

Այս ծաւալուն բաժնին մէջ՝

ԱՐՄԵՆ ՂԱՐԻՊԻ «ՅՈՒՇԵՐՈՒ ԲԱԳԻՆ» ՀԱՏՈՐ

Շարունակում էք 16-ին

հեղինակը իր լուրջ քննարկման առարկան կը դարձնէ մեր ժողովուրդի քաղաքական կառույցներու իրերամերժ նկարագրի գիծը. թէ ինչպէս, տասնիններորդ եւ քսաներորդ դարերուն, երկու յեղափոխական կուսակցութիւններ՝ (Իմա. Հնչակեան եւ Դաշնակցութիւն) անջատաբար գործելու ունակութիւններ ունեցան եւ համերաշխաբար գործելէ խուսափեցան, պատճառ դառնալով իրենց առաջադրած թրքահայաստանը ազատագրելու ծրագրի անյաջողութեան եւ Ապրիլ 24-ի եւ աղէտներու գոյառման: Կը գրէ Ղարիպ. «Հարց չեմ տուած ես ինձի, թէ երբ հայ ժողովուրդը կ'ապրէր լինելու թէ չլինելու ճգնաժամը, ինչո՞ւ այս յեղափոխական կուսակցութիւնները, հեզնելով «ես»երու ջլատական ոգին, չմիացուցին իրենց ռազմական ուժերը՝ խոյանալու համար հասարակած թշնամիին վրայ»:

Հաստատելէ ետք որ Եւրոպական կայսերապաշտութիւնը իր գործող դրոշմն ու դերակատարութիւնն ունի այդ թերութիւններուն գոյառման ու յարաձուռն հզօրացման մէջ, Ղարիպ, իր սովորական մեթոտով, իր տուած հարցումին պատասխանը կը փնտռէ եւրոպական կայսերապաշտութեան տիտուր հաշիւներուն մէջ, որոնց նշանակ դարձած էր Մայիս 28-ի Հանրապետութիւնը: «Մայիս 28-ի հանրապետութիւնը գոհը դարձած էր քաղաքական գիտակցութենէ գուրկ, տհաս, զգացական առաջնորդներու, հեղինակին իսկ բառերով՝ «պոլշեւիզմի դէմ ունեցած ատելութեան դիւահարութեան»: Անգլիան օգտակար չէր այդ դիւահարութեան, դաւաճաբար հրահրեց Հայաստանի Հանրապետութեան ապիկար վարիչները, որոնք վարչապետ վրացեաններու առաջնորդութեամբ, կազմակերպեցին Հայաստանի Խորհրդային վարչակարգը տապալելու յաւակնութիւններով փքացած, 18 Փետրուար 1920-էն մինչեւ 2 Ապրիլ 1920 տեւող Փետրուարեան Ապստամբութիւնը, որ պատճառ դարձաւ քսան հազար հայորդիներու եղբայրասպան արիւնահեղութեան, նաեւ՝ «Ալեքսանտրապոլի վարկաբեկիչ եւ ամօթալի դաշնագրի» ստորագրութեան, որ անհաւատալիօրէն տեղի ունեցաւ Հայաստանի Խորհրդայնացումէն 16 ժամ յետոյ, երբ արդէն գոյութիւն ունենալէ դադրած էր Մայիս 28-ի վարչակարգը: Անդամներու լիարժեքութեան պատճառեց այդ դաշնագիրը, որոնք լրջօրէն տեղ են գտած ներկայ հատորին մէջ:

Այդ իսկ պատճառաւ Ղարիպ կը գրէ դառնութեամբ, թէ «Վրացեան եւ Խատիսեան հաշուետու են ոչ միայն իրենց կուսակցութեան, այլ՝ համայն հայութեան դատաստանին առջեւ: Ապագան պիտի խօսի այդ մասին»:

x

Հայաջնջումի օսմանեան օրերէն երբ անցած են աւելի քան ութ տասնամեակներ, մտահոգ Ղարիպ հարց կու տայ Հնչակեան, Դաշնակցական եւ Ռամկավար կուսակցութիւններուն, թէ մակերեսային միասնութեան մեր օրերուն, ի՞նչ խորհած ունին եւ ի՞նչ ըրած ունին կայսերապաշտութեան՝ Լիբանանի նման փոքր տէրութիւններու շարքին գտնուող նաեւ անտէր հայութեան գլխուն, այլ երանգներով կարելի «եղեւներ» պատրաստելուն կապակցութեամբ: Ղարիպ ունի իր

առաջարկութիւնը, որ ինքնին կը կայանայ Սփիւռքի ճակատագիրը տնօրինելու իրաւասու մարմնի մը ստեղծման մէջ: Նման ոգի մը կը տիրէ Ղարիպի մօտ երբ իր լուսարձակին տակ կ'առնէ «Հայ ժողովուրդին Արդի Գոյալիճակը՝ Մեր Դատը Լուծելու Բնական Եղանակը» խորագրին տակ: Համաձայն իրեն երկու միջոց գոյութիւն կրնայ ունենալ: Առաջինը, կարելի պիտի դառնար կայսերապաշտութեան հակակշիռէն ազատագրուած թուրք ժողովուրդի եւ հայ ժողովուրդի միջեւ վերականգնած բարեկամութեան ստեղծումով (էջ 98), երկրորդը՝ ապաւինելով Խորհրդային Միութեան:

x

Ղարիպ իր տարածուն, լուրջ եւ առարկայական քննարկման նիւթ կը դարձնէ, նոյնպէս, Նոյ. 29, 1920-ին տեղի ունեցած Հայաստանի Խորհրդայնացումը, Ներգաղթը, կաթողիկոսական Տազնապ-Պայքարը, 1958 Եղբայրասպան կռիւները Լիբանանի քաղաքացիական պատերազմը եւ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի դրդապատճառները, որոնք շահեկան լուսաբանութիւններ, յտակացումներ եւ բացատրութիւններ կը հայթայթեն ընթերցողին: Ան, իր գրքի աւարտական մի քանի գլուխներուն՝ կ'անդրադառնայ դէպի Հայաստան եւ Միացեալ Նահանգներ կատարած զբօսաշրջական այցելութիւններուն, իր կուսակցական եւ հասարակական գործունէութեան, ինչպէս նաեւ իր կողակիցին մահով իր ապրած յոգեբուն մասին, յոգեբ, որոնք անձնական, պատմական, ինքնակենսագրական եւ յուշագրական բնութիւն են: Մենք, հիմնականին մէջ, պիտի ծանրանանք ազգային-քաղաքական բնութիւն վերը յիշուած այդ հիմնարկները վրայ, զորս ժառանգած ենք մեր անցեալէն, բայց եւ որոնք կը պահեն իրենց այժմեականութիւնը, իրենց ամբողջական միջուկով:

x

«29 Նոյեմբեր 1920-ի Արեւաշող Օրը» Գլուխ 16-ի բաժնին մէջ, Հայաստանի Խորհրդայնացման իր գնահատութիւնը՝ գուրդողով Ալեքսանդր Միասնիկեանի, թէ՛ «մինչեւ յիսուն տարի պիտի ունենանք Հայաստան մը, որ չէ եղած ո՛չ Արշակունեաց եւ ոչ ալ՝ Բագրատունեաց օրով», եւ Աւետիք Իսահակեանի, թէ՛ «Վատը գնալուն է, իսկ լաւը մնալուն», մէջբերումներուն՝ կ'ըսէ Ղարիպ. «Նեու ինձմէ Խորհրդային Հայաստանը անթերի նկատելու սխալը», կ'եզրափակէ, ցուցաբերով իրապաշտ մօտեցում, որ կրնայ օրինակելի դառնալ շատ ու շատ պատճառաւ պարզունները, մոռնեալները, բայց միւս օրերուն՝ եղան առաջին կրքոտ քարկոծողները, դատապարտողները:

Ան իր արդար գնահատութիւնը կու տայ. երբ կը գրէ. «Հիացումով կը հաստատեմ «Խորհրդային ժողովրդավար տիքթաթութեան, որ ամենաճիշդ միջոցն էր Խորհրդային Միութեան բազմակրօն, բազմալեզու, բազմացեղ խառնիճաղանճ ժողովուրդներու ընկերվարականացման ուղիին մէջ: Նոյ. 29-ով, հայ ժողովուրդին ալեկոծեալ, տառապահար եւ թափառաշրջիկ նաւը խարխիս նետեց ամենէն ապահով ու զօրացուած նաւահանգիստը՝ Խորհրդային Միութիւնը: Տնչեց վերելքի սուլոցը»:

x

Ներգաղթը իր դրական եւ բացասական կողմերով իր լուրջ քննարկման առարկան դարձուցած է

Ղարիպ, 29-րդ գլխուն մէջ: Հոն կը գտնուի Ներգաղթի կազմակերպման պատմական բոլոր մանրամասնութիւնները: Անոր ստեղծած խանդավառութիւնը, նաեւ արձանագրած շօշափելի թերիները, որոնք արտապայտութիւն կը գտնեն ներգաղթողներուն մտքերը գլխաւորաբար չնախապատրաստուելուն եւ ներգաղթողներու գատորոշման եւ այդ օրերուն մոռնեալներու եւ այսպէս կոչուած յառաջադէմ թերթերու՝ Հայաստանը որպէս «մեղր» ու «կարագ» հոտող աւետեաց երկիր մը շեփորելուն մէջ: Ամէն դէպքին, Ղարիպ գնահատութեամբ, արձանագրութիւն կը գտնէ այն վարկածը, թէ՛ «Այսօր իրականութիւն է, որ ներգաղթը է՝ ու կը մնայ հայ ժողովուրդին մշտապէս գոյութիւնը ապահովող հայրենասիրական այն մեծագոյն, արտակարգ աքոր, զոր Խորհրդային Հայաստանը արձանագրեց հայոց պատմութեան տարեգրութեան մէջ. 1946-ին, որպէս եզակի ու շնորհալի կոթող»:

Ուշագրաւ է իր բոլոր ծալքերով քննարկման առարկայ դառնալը 1956 թ. սկսած եւ մինչեւ օրս տակաւին շարունակուող Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու պատմութեան, ինչպէս պիտի բնորոշէր Ղարիպ՝ «ամենէն մոռալ» եւ «ստորնացուցիչ» տազնապը, որ տեղ գտած է գրքին 21-րդ գլխուն մէջ, «Կաթողիկոսական Տազնապ-Պայքարը» ենթախորագրի տակ:

Ղարիպ ամբողջական հարագատութեամբ կը ներկայացնէ էջմիածնի Գահակալ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Պաճեանի, ազգային երեք կուսակցութիւններ՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան, Ռամկավար Ազատական կուսակցութեան, Դաշնակցութեան եւ Հէգոք ճնշիչ մեծամասնութեան կեցուածքները՝ ինչ կը վերաբերի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու կաթողիկոսական Տազնապին: Ղարիպ, այդ տազնապին ամբողջական պատասխանատուութիւնը կը բեռցնէ Դաշնակցութեան վրայ, որ ի հակադրութիւն էջմիածնի՝ առաջադրեց իր մենատիրութիւնը հաստատել Կիլիկիոյ թեմին վրայ: Արդարացելու համար իր ստեղծած այս տազնապը, կը գրէ Ղարիպ, ան ընդհանրացուց շինծու, կեղծ, այլ դիտաւորեալ, նաեւ ներկայ ժամանակներուն հակասող այն գաղափարը, թէ «էջմիածնի գահակալները խորհրդային Միութեան թմբկահարներ են»:

Վերջակէտենք նաեւ այս բաժինը, մէջբերելով հեղինակին եզրափակիչ այն խօսքը, թէ՛ «Մեր Ազգային կեանքի մէջ ծայր առած երկպարակութիւնը այնքան լայն համեմատութիւններ գտաւ աշխարհի հայ մամուլին մէջ, որ աշխարհացրիւ հայութեան ներս կազմուեցան երկու որոշ խմբաւորումներ՝ «էջմիածնական» եւ «Անթիլիասական» մակագրութիւններով, Հայ Առաքելական Եկեղեցու եւ անոր անբաժանելիութեան դէմ մեղանջում մը նկատելով այս պարագան»

x

Մենք, «Յուշերու Բագին» ներկայ հատորի մէջ մեր յատուկ քննարկումէն դիտումնաւոր կերպով գերծ պահեցինք, թող որ խիստ շահաւէտ յուշագրական, մարգական, ուղեւորական, Բ. Աշխարհամարտի եւ լիբանանեան տասնամեայ պատերազմի մասին կատարուած վերլուծումները, մեզի սահմանուած ժամանակահատուածի սահմանափակուածութեան պատճառաւ:

Առաւելաբար տարածուեցանք համանուն հատորին մէջ տեղ գտած

հայագրի վերջին հարիւրամեակի ազգային, քաղաքական, եկեղեցական եւ հայրենական հիմնահարցերուն շուրջ: Այդ հիմնահարցերը կան եւ տակաւին պիտի գոյատեւեն: Դեռեւս կը խօսուի եւ կը գրուի մինչեւ օրս, վատահաբար պիտի խօսուի եւ գրուի շատ երկար ժամանակ, այնքան ատեն, որ կը գոյատեւենք, այնքան ատեն որ կ'ապրինք, այնքան ատեն որ անոնք ստացած չեն իրենց արդար լուծումը: Այդ հարցերը կը պահեն իրենց ե՛ւ բնութագրային ե՛ւ խորքային այժմեականութիւնը, այլապէս մտահոգիչ, արդի ժամանակներու տարապայման կացութիւններու տակ:

Մեր ներկայ ներագագային եւ միջազգային հիմնախնդիրները համարեայ կրկնութիւնը կը հանդիսանան Ղարիպի շօշափած՝ մեր ժողովուրդի առաջ ծառացած մեր ազգային ու քաղաքական ճգնաժամային հիմնախնդիրներուն, որոնք կը սպառնան մեր ազգի յառաջընթաց գոյերթին, անգամ մեր գոյութեան պահպանման: Նոյնն է պարագան քիչ մը արմէնուր, մեր հայրենիքէն ներս, թէ հայրենիքէն դուրս Սփիւռք աշխարհի մէջ: Մեր անմիաբանութիւնը աւերներ կը գործէ մեր հայրենիքէն ներս, թէ մեր հայրենիքէն դուրս, մինչ մեր դարաւոր թշնամին սոր առիթի կը սպասէ իր դարաւոր երազը՝ տարածաշրջանէն ներս խաղաղութիւն, համագործակցութիւն եւ տնտեսական զարգացում խոստացող արդիական լոգուն քննրով առաջնորդուող բանթուրքիզմը իրականացնելու համար: Դերակատարները փոխուած են, բայց հարցերը, պայմանները, հիմնախնդիրները կը մնան նոյնը, եւս առաւել՝ աւելի սաստկութեամբ:

Այս անկիւնէն մօտենալով «Յուշերու Բագին» ներկայ հատորը, երկար տարիներու վրայ գործած հասարակական ղեկավար գործիչի մը ցաւած սրտէն բարձրացող պատգամ, յորդոր, խնդրանք մըն է, ուղղուած՝ մեր ժողովուրդի ազգային, քաղաքական, կրօնական եւ պետական բոլոր կառույցներու վարիչներուն, որոնք, ճիշդ, սխալ՝ ստանձնած են մեր ժողովուրդի ղեկը քիչ մը ամէն տեղ: Այդ պատգամը, համարեա կրկնութիւնն է մեր աննման յեղափոխաշունչ Չարենցի հրաբորբ պատգամին, որ կ'ըսէ. «Հայ ժողովուրդ, քո փրկութիւնը քո միասնութեան մէջ է»:

Արմէն Ղարիպ հարց կու տայ իր գրքին էջ 83-ին մէջ. «Դաշնակ-Հնչակ միասնութեան պարագային պիտի կրնայի՞նք կանխարգիլել Յեղասպանութիւնը», հետեւեալը պիտի ըլլար պատասխանս» կ'ըսէ ան. «Եթէ Հնչակեան եւ Դաշնակցական կուսակցութիւնները համագործակցեցին եւ յաջողեցին իրականացնել հայ ժողովուրդին գործն միասնակա-նութիւնը, ո՛չ միայն կրնային կանխարգիլել ապրիլեան եղեռնը, այլ նաեւ՝ ազատագրել Թրքահայաստանը»: Նոյնն է Ղարիպի ներգործող պատգամին իմաստը նաեւ այսօրուան դրութեամբ. թէ՛ ամբողջական ազգի միասնութիւնը հրամայական է Հայաստանի հանրապետութիւնը յաւերժացնելու, Արցախի հանրապետութիւնը կոթողելու եւ հայ ժողովուրդի յաղթական երթը ամրագրելու համար:

x

Օգտաշատ, կառուցողական, պատմագիտական եւ փորձառական հարուստ գիտելիքներով յղբացած հեղինակութիւն մըն է Արմէն Ղարիպի «Յուշերու Բագին» ներկայ հատորը, որուն թելադրելի ընթերցումը կը կատարուի հաճութեամբ եւ շահեկանութեամբ:

ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Շարունակում է 14-էն

վերջնական գործառնությունը մէկը բացատրում է, որ պիտի տիրոջը կանչի, ու մի քանի թրքերէն նախադասութիւններ է բղաւում որոնց մէջ յատակ ականջիս է հասնում Պողոս անունը: Մեզ է մօտենում լուրջ դէմքով, բարձր ու պարթեւ հասակով մի մարդ. երկուսս մի վայրկեան խորը իրար աչքերի մէջ ենք նայում, կարծես թէ իրար միտք են կարդում. առանց մի ըստէ հաշուի առնելու՝ ինձնից անկախ հայերէն հարցնում եմ.

- Պարոն Պօպոս, դուք հայերէն խօսո՞ւմ էք:

Մի ակնթարթում վերանում է մեր մէջ գոյացած պաշտօնական յաճախորդի ու վարձառողի հանգամանքը, իրար ձեռք ենք սեղմում, հարցերի տարափ է որ թափում է ինձ վրայ, իմ արեւելաբարբառ խօսելու շատ հաճելի է հնչում հայրենակցիս ակնշիւ: Կարելի չի լինում իր ձեռքից ազատուել, ուժով տանում է իր տունը, ծանօթացնում ընտանիքի հետ:

Նա խոստանում է չաջորդ օրը ինձ տանել քաղաք ու պտտցնել տեսարժան վայրերը, բայց իմ պնդմանս վրայ՝ ժամանակի սղուծիւնը նկատի առնելով, առաջնութիւնը տալ հայ կազմակերպութիւններին ու համայնքին այցելելուն:

Այսպիսով ինձ այն բացառիկ առիթն է տրւում, որ շատ կարճ ժամանակում թէկուզ անկատար բայց մի ընդհանուր գաղափար կազմեմ մեր Պոլսի հայ համայնքի մասին:

Այս ինչ տարօրինակ ազգ ենք մենք, ամէն տեսակի քաղաքական պայմաններում, ամէն տեսակի կաշկանդումներին ներքոյ կանգ չենք առել ազգայնորէն ու մշակոյթով զարգանալու: Իմ այցելած հայ ընտանիքներին շատերին գտայ անտեսապէս բաւականին բարգաւաճ, իսկ մի քանիսն էլ հարուստ: Նկատելի էր, որ ունեւոր ընտանիքների տնեւորի ներսը ինչքան էլ շքեղ կահաւորուած լինէր, դուրսը միշտ անխնամ, անկատար էր թողուած: Իմ հարցերիս պատասխանեցին թէ չեն ուզում իրենց թուրք «բարեկամների» նախանձը շարժել, ո՞վ է իմանում վաղը ինչ է լինելու:

Քշում եմ այս փոքր մեքենան հողոտ, փոշոտ ճանապարհով, գնալով բնութիւնը դառնում է աւելի չոր, ամալի, շատ քիչ երթեւեկ կայ, յաճախ հանդիպում ենք թրքական գինուորական բեռնատար մեքենաներին: Ճանապարհը (եթէ կարելի է ճանապարհ կոչել) շատ նեղ է, երբ գինուորական մեքենաները նկատում են որ դիմացից մի փոքր մեքենայ է գալիս, դիտարկեալ իրենք բռնում են ճանապարհի մէջտեղը կամ մինչեւ իսկ ձախ կողմը եւ ուղղակի քշում մեր վրայ, քանի անգամ մահուան վտանգից հրաշքով ազատուեցինք, դա եղաւ մեզ համար սովորութիւն երբ տեսնում էի որ դիմացից գինուորական մեքենայ է գալիս, ճամբից դուրս էի գալիս ու սպասում մինչեւ «քաջ գինուորների» մեքենաները անցնեն, որից յետոյ ես շարունակում էի, իսկ այս հանգամանքը նրանց բաւական հաճոյք էր պատճառում, թրքի հոգեբանութիւնը՝ թոյլին պիտի յաղթել:

Երեկոյեան հասնում ենք Կեսարիա: Լսել եմ որ 25,000 թրքախօս հայր են ապրում այս քաղաքում, բայց առիթը չունեցայ ոչ մէկին հանդիպելու: Քաղաքը չոր է, փոշոտ, շէնքերը հին, կիսաքանդ, փո-

ղոցները գրեթէ ամալի, ոչ մի շինարարութեան, յառաջդիմութեան, բարգաւաճման նշան չեմ տեսնում:

Նորից առաւօտը շուտ թողնում ենք Կեսարիան եւ ճանապարհուում դէպի Սոււայ:

Ճամբան դառնում է դժուար, բարձրանում ենք անվերջ. պիտի կտրենք Խատրոսեան լեռնաշղթան. այնքան ենք բարձրանում որ օդը դառնում է, խոնաւ սառը, մտնում ենք կիրճերը, նորից դուրս գալիս, ինչպէս միշտ նորից նկատելի է չորութիւնը եւ ամալութիւնը, ոչ մի գիւղ չի երեւում: Գիշերը անց ենք կացնում Սոււայում, առաւօտուն նորից մագլցելու համար լեռնաշղթան դէպի էրզրում: Շարունակ շուրջս եմ նայում, որ գուցէ տեսնեմ մի նմուշ, մի աւերակ շէնք, մի որեւիցէ ապացոյց որ օրերից մի օր այստեղ հայեր են ապրել, ի գուր են իմ ջանքերը, թուրքը բացի այն որ գուրկ է շինելու, ստեղծագործութեան ընդունակութիւններից, գուրկ է նաեւ եղածը պահելու կարողութիւնից: Հետեւեալ օրինակը մի փոքր նմուշ է թէ ինչ վիճակում են գտնուում մեր պատմական եկեղեցիները ներկայումս.

Մալաթիայում մայր եկեղեցին, ներկայումս գինուորական մթերանոց է, հայ բողոքական ժողովատեղն ներկայումս վերածուած է այլևրի գործարանի: Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանքը 11 դարի հայ ճարտարապետութեան նմուշներից է եւ ներկայումս կիսաւեր է:

Երկար գարիվեր քշելու հետեւանքով մեքենան սկսեց տաքանալ, ճաշից յետոյ ժամը 4-ն է, արեւը մայր է մտնում, հեռուում նկատում եմ մի գիւղ, (մի հազարակալտ երեւոյթ), մեքենան քշում եմ դէպի հրապարակի եւ կանգնում մի սրճարանի առաջ, չի անցնում մի փոքր ժամանակ մենք շրջապատում ենք ամբոխով. առաջին անգամ տեսնում եմ իսկական թրքական դէմքեր, դաժան նայուածքներով: Այնքան շատ են որ ճամբան շարունակել անհնարին է դառնում, մի քանի հոգի մեքենան են շարժում իսկ մի քանի ուրիշներն էլ փորձում են դուռը բանալ:

Գնալով կրքերը բարձրանում են, մտածում եմ պիտի մի ելք գտնել քանի ուշ չի: Մեքենայից դուրս եմ գալիս եւ ուղղում ուղղակի իրենց սրճարանը, բարձր ձայնով գոչում թէ, ուր մնաց թուրքերի «խէչրաթը», ինչո՞ւ մի «ղարբի» չէք օգնում եւ այլն, այս ուղղակի մօտենումս նրանց կարծես մի քիչ կասեցնում է, մի քանի ծերունիներ մօտենում են ու սկսում են հարց ու փորձ անել: Քանի որ գնում եմ Իրան ուրեմն ինչ կասկած որ իրանցի եմ, գտնում է մի մեխանիկ որը իր գիտցած ձեւով կարճ ժամանակուայ համար շտկում է մեքենան եւ առաջարկում որ եթէ իրեն վճարեմ 25 լիրա ինքը ինձ հետ կը գալ մինչեւ էրզրում եւ եթէ ճամբին նորից կարիքը զգացուի օգտակար կը լինի: Երեքով ճանապարհուում ենք, գիշերը ուշ ժամին մտնում էրզրում: Քաղաքը ներս մտնելուց մեզ մի քանի գինուորներ կանգնեցնում են եւ առաջնորդում դէպի «Ամնի-աթ»:

«Ամնիեթ»ում մի գինուորական ստուգում է մեր անցադրերը, հարցնում թէ ո՞վ է մեզ հետ եկող մեխանիկը, իրեն բացատրում եմ հանգամբնը, մի ինչ որ թրքերէն խօսակցութիւն է անցնում եւ դառնում գինուորականի եւ մեխանիկի

ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻ

Շարունակում է 6-էն

վին անտեսել նման վարկած մը:

Երրորդ գլխաւոր բաժանմունքը՝ առանձին սենեակ մը, կը պարունակէ նախապատրաստական ուսումնասիրութիւններով ու բացառիկ աշխատանքով ստեղծագործուած շարք մը առաջնակարգ գերիրապաշտ իւղանկարներ, ինչպէս «Գութանն ու Երգը» (1947), «Սահմանը» (1947), «Օրհաս» (1947), «Մութ Կանաչ Իւղանկար» (1948), «Վերջին Իւղանկար» (1948), եւ բազմաթիւ գծանկարներ: Ուշագրաւ է «Գութանն ու Երգը», որու ներշնչման մէջ կարեւոր դեր ունին Կորքիի այն ատեն բնակած Վըրճինիայի եւ Քըննեթիքթի բնութեան նմանութիւնները իր մանկութեան հայրենի բնակարաններուն հետ: Իր քրոջ Վարդուշին ուղարկած նամակին մէջ կը կարդանք. «Ձեռն կրնար երեւակայել բեղմնաւոր կերպարանքները որոնք վեր կը ցատկեն մեր հայկական գութաններէն, այն գութաններէն գորս մեր նախահայրերը ամբողջ հազարամեակներ գործածեցին ծանր աշխատանքով ու ոգեւորութեամբ ու նեղութեամբ ու բանաստեղծութեամբ: Խորգոմի հայ մարդը գութան մը կ'ուզէ որպէս իրեն յարմար տապանաքար: Ես ծիրանի բոյրը կ'առնեմ մեր մրգաստաններու ծառերէն, եւ իմ դիմացս անոնք կը շարժին հինաւուրց պարերու մէջ: Եւ երգերու մէջ - հնադարեան երգերը հայ ժողովուրդի, մեր տառապեալ ժողովուրդի: Այս է որ կը նկարեմ հիմա»: Չմոռնանք թէ չիշեալ առաջին կարգի գործերը բծախնդրօքն իրագործուած են՝ հակառակ իր հոգեկան ընկճուածութեան, քաղցկեղին, Ֆիզիքական եւ ընտանեկան յարատեւ բարդացող դժբախտութիւններուն:

Չորրորդ, վերջին բաժանմունքը, երկու կից սենեակներէ բաղկացած, կը պարունակէ «Նշանտուք» երեք մեծադիր իւղանկարներու շարքը (1947), առաւել գծանկար ուսումնասիրութիւն մը «Նշանտուք»ի

մէջ, մէկ էլ այն տեսայ որ գինուորականը հարուածներ է որ իջեցնում է նրա գլխին, այդ բաւարար չհամարելով կանչեց երկու գինուորներին, որոնք իրենց հրացանի կոթերը ի գործ դրին ու մի ըստով ուշագնաց վիճակով ան փութեց գետին արհաւիրուայ եւ անձանաչելի դէմքով:

Մի ըստէ ինձ թոյլ տուին որ մօտենամ եւ գինուորներին ասեմ որ այդ մարդը միայն ինձ օգտակար էր ուզել լինել, իմ միջամտութիւնը արդիւնք չտուեց որովհետեւ գինուորականը պոռաց թէ՝

- You keep out of this, Turkey has laws, «Pasha»:

Իսկ յետոյ իմացայ որ այդ

համար (1947): Իր մահէն մէկ տարի առաջ, սիրոյ հրաշագործած վերածնունդը խորհրդանշող կերպարանքներու, բուսական ու կենդանական խորհրդապատկերներու տօնախմբութիւն մըն է այս շարքը՝ դեղին կաւի բարակ, ինքնուրոյն ամպամածութեան մը մէջ պարփակուած որ տեղ-տեղ կ'ընդմիջուի մեղմ կապոյտով, մանիշակագոյնով, կանաչով ու դեղինով:

Իր նամակներէն մէկուն մէջ (1937) Արշիլ Կորքի կը գրէր «Ինչ է արուեստագէտը եթէ ոչ ստեղծագործող մը որ կ'ուզէ հաղորդակցիլ: Ես կը փնտռեմ ձեւ մը կամ լեզու մը որ կարենայ արտայայտել իմ գաղափարներս՝ մեր ժամանակներու վերաբերեալ...»:

Վերացականացումը (abstraction) - աւելի ճշգրտօրէն՝ վերացական արտայայտապաշտութիւնը (abstract expressionism) - հանդիսացաւ իր որոնած այդ ձեւը կամ լեզուն: Իր մէկ ուրիշ նամակին մէջ (1947) ան կ'ըսէր. «Վերացականացումը մարդուն թոյլ կու տայ իր միտքով տեսնել այն որ չի կրնար աչքով տեսնել ֆիզիքայէս»: Դեռ այլ նամակի մը մէջ (1942) կը կարդանք. «Մտածման հում նիւթը արուեստագէտին ցանած սերմն է: Երազները կը կազմեն իր վրձինի թելերը: Եւ, ինչպէս որ աչքը կը գործէ որպէս ուղեղին մուտքը, ես իմ արուեստի եւ աշխարհայեացքի ընդմէջէն է որ կը հաղորդեմ իմ ամենախոր ըմբռնումներս: Սովորականէն ու հանրայայտէն անդին հետագօտելով, կը ստեղծեմ ներքին անհունութիւն մը: ... Ասիկա իրագործելու համար, գծագրութիւնը հիմունքն է արուեստի: Վատ նկարիչ մը անկարող է գծել: Միւս կողմէ, մէկը որ լաւ կը գծէ, միշտ կարող է նկարել: Գծանկարել գիտցող արուեստագէտը օժտուած է իր գիծն ու ձեւը հակակշռելու կարողութեամբ: Ատով իր մէջ կը զարգանայ գիծի եւ շօշափման ճշգրտութիւնը: Այս է վարպետութեան, հմտութեան ուղին»:

Ծեծի պատճառը այն է որ էրզրումը լինելով գինուորական գօտի, ոչ մի տեղացի ճամբորդ առանց յատուկ իրաւունքի այդ քաղաքը մտնել չի կարող: Շատ վատ տպաւորութիւններով անց կացրինք գիշերը:

Թողնում են էրզրումը դէպի Պարսկաստան: Մի որոշ ժամանակից յետոյ նկատում եմ աջ կողմիս բլուրները ծածկուած են հսկայ թնդանօթներով որոնք ուղղուած են դէպի Հայաստանի ուղղութեամբ եւ թնդանօթների շարքը քրտմեթրներ շարունակուած է:

Առանց դժուարութեան հասնում ենք սահմանը եւ մտնում Պարսկաստան:

ՇՆՈՐԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Քրիսթին Աղախանեան ընդ Սեւակ Խաչատուրեան Ամուսնացեալք 5 Սեպտեմբեր 2010 Լոս Անճելըս

Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու երջանիկ կեանքի բարեմաղթութիւնները նորապսակ գոյգին եւ անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Նորայր Խաչատուրեանին: «Մապիս»

Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը, Հ.Մ.Մ.ը եւ Կայծերիտասարդական Միութիւնը կը շնորհաւորեն Սեւակ Խաչատուրեանի եւ Քրիստին Աղախանեանի պսակադրութիւնը, մաղթելով անոնց երջանիկ եւ բարեբեր տարիներ:

Մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք նաեւ Տէր եւ Տիկին Նորայր եւ Մարի Խաչատուրեաններուն, ինչպէս նաեւ համայն Խաչատուրեան եւ Աղախանեան ընտանիքներուն:

ՄԱՐԱԶԴ



ՀՌԻՓՍԻՄԷ ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆ
(Ծնեալ Պիւքրիւեան, Հոկտեմբեր 20 1927)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, եղբօր, գոքանչին եւ հարազատին մահը, որ պատահեցաւ Շաբաթ 4 Սեպտեմբեր 2010-ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինշաբթի 9 Սեպտեմբեր 2010, առաւօտեան ժամը 11-ին, Պրըպէնքի Առաջնորդանիստ Տաճարին մէջ, 3325 Glenoaks Blvd. Burbank, CA 915045, որմէ ետք, հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Hollywood Hills Forest Lown գերեզմանատուն:

Սգակիրներ,

- Ամուսինը՝ Արշակ Եղբայր Գալէնտէրեան, Զաւակները՝
- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սեղա Գալէնտէրեան եւ Զաւակները՝ Արշակ, Հռիփսիմէ, Սարգիս եւ Պարոյր
- Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Սեւան Գալէնտէրեան եւ Զաւակները՝ Թալին եւ Շահան
- Տէր եւ Տիկ. Ժօզէֆ եւ Նուէր Սէբիլեան եւ Զաւակները՝
- Տէր եւ Տիկ. Սարօ եւ հուրի Սէբիլեան
- Տօքթ. Վիգէն Սէբիլեան
- Տէր եւ Տիկ. Արա եւ Միշլին Սէբիլեան
- Տէր եւ Տիկ. Գարլ եւ Մարիա Սալիպա
- Տօքթ. եւ Տիկ. Արշակ եւ Վարդուհի Գազանճեան եւ Զաւակները՝
- Տօքթ. եւ Տիկ. Յովակ եւ Մոնիքա Գազանճեան
- Տէր եւ Տիկ. Նարեկ եւ Նարինէ Գազանճեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Սահակ եւ Ամալ Պիւքրիւեան եւ Դուստրը՝ Քրիսթին
- Եւ համայն Գալէնտէրեան, Նասանեան, Պալեան, Թէլեան, Եփրեմեան, Զարըբեան, Եսփուճեան, Սէբիլեան, Գազանճեան, Գալֆայեան եւ Աւագեան ընտանիքներ:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՀՌԻՓՍԻՄԷ ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆի մահուան տխուր առիթով «Մասիս»-ի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն Արշակ Գալէնտէրեանին, Տօքթ. եւ Տիկ. Արշակ եւ Վարդուհի Գազանճեանին, ինչպէս նաեւ ընտանիքի անդամներուն եւ համայն պարագաներուն:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՀՌԻՓՍԻՄԷ ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆի մահուան առիթով Հ.Կ.Բ.Մ.ի վարչութիւնը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ամուսինին՝ Արշակ Գալէնտէրեանին եւ վարչութեան անդամներէն Տիկ. Վարդուհի եւ Տօքթ. Արշակ Գազանճեանին:

ՎԼԱԴԻՄԻՐ ԱԹԱՆԵԱՆԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

Շարունակուած էջ 13-էն

պարուրուած հեղինակային լուծումներով, երկրորդին՝ վիրտուոզ վարպետը գրաւել է էսթետիկ ու տրիֆազին նրբագծերով պարուրուած քանդակներով ու «կուբիստական» կտաւներով, երրորդի աչքից չի վրիպել հայագրի հեղինակութեան նրբագեղ ու ճարտարամիտ ոճը, չորրորդը նկատուած է Աթանեանի հայրենասիրութիւնն ու նուիրումն իր ազգին, բայց հպարտօրէն ասուծ

է, որ Աթանեանը նաեւ իրենցն է: Վերջինս՝ ամերիկացի ճանաչուած արուեստաբան Ռիչարդ Նաթանն իր յօդուածում գրում է. «Աթանեանն առաջինն է իր տեսակի մէջ, եւ ինչպէս Բայրոնին՝ նրան էլ կարելի է համարել աշխարհի քաղաքացի»:

Իսկ մեզ՝ Երեւանի ներկայ ու նախկին քաղաքացիներին մնում է գնահատել մեր մեծերին ու պահպանել նրանց թողած արժէքները, այնպէս՝ աշխարհը սպասում է նրանց:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

ՕՐՈՒԱՆ ՊԱՅԱՆՁՔԸ

Շարունակուած էջ 8-էն

11. Մինաս Գ. Համդեցի 1698-1702: Աթուակից եղաւ Յովհաննէս է. Պոլսեցի Պատարիարքին:

12. Յովհաննէս Կոյոտ, 1713: Աթուակից եղաւ Սահակ Եպսկ. Ապուհեցիին: (Հայ Պատարիարքներ Երուսղէմի, 2005, Հայկ Գրիգորեան):

Սուրբ Աթուի պատմութեան մէջ եղած են շրջաններ, ուր աշխարհական հոգաբարձութիւններով տնօրինուած են վանքին հարցերը:

Քսանրմէկերրորդ դարու առաջին տասնամեակը, դժուարին օրեր եղան մեր վանքին համար: Ներկայ իրավիճակը յուսալքումի կ'առաջնորդէ եւ կրնայ քայքայել արդէն իսկ անմիաբան միաբանութիւնը:

Հարցը լուրջ է, չըսելու համար ահագանգային:

Հոգեւոր կեանք անգամ չկայ վանքին ներս:

Ի՞նչ ըսել է... Լուսարարապետ սրբազանը ստիպուած կ'ըլլայ վարդապետներուն ամսականներէն զեղջել, քանի անոնք կը թերարան եկեղեցի յաճարեն:

Ի՞նչ ըսել է... վանական վարդապետ մը երկու ամիսէ ի վեր պատարագ անգամ կը թերանայ մատուցանելու:

Ի՞նչ ըսել է... նոր սերունդի արաբախօսութիւնը հայոց դարաւոր վանքէն ներս, հոն ուր Սրբոց Թարգմանչաց Վարժարան կայ, եկեղեցիներ կան, հարուստ մատենադարան եւ հայ սկումբներ կան:

Ի՞նչ ըսել է... վանքի հաշուապահական գրասենեակէն 175,000 տոլար եւ այլ ոսկեայ դրամներ գողնալ:

Ի՞նչ ըսել է... գողութենէն ամիսներ ետք, հոգեւորական մը 80,000 տոլար իսրայէլեան լօթո շահած է եղեր, մինչ՝ երկու այլ վարդապետ կարգաթող՝ կը փախչին վանքէն առանց լուրի:

Ինչո՞ւ քննութիւններ չկատարուեցան, պատժելու համար վանքի «ներքին գողերը», որոնք ցարդ կը մնան անյայտ:

Ի՞նչ ըսել է... վարդապետներու բամբասանքը իրարու դէմ: ո՞ւր մնաց «հոգեւոր եղբայր ի Քրիստոս» հասկացողութիւնը ըմբռնումը, ճշմարտութիւնը:

Ի՞նչ ըսել է... վարդապետները «քօմիսէն» շահաբանօթին կ'ոսկեն գործ մը ձեռնարկելէ առաջ:

Ի՞նչ ըսել է միաբանութեան ատելաբառ վերաբերմունքը իրարու հանդէպ: Նոյնիսկ Աստուծոյ բարեւը՝ «բարի լոյսը» կը զլանան իրար տալու:

Ի՞նչ ըսել է հայ ուխտաւորներու եւ հայ հաւատացեալներու կողմէ աղօթքներով ասեղնագրծուած ուխտի նուէրները՝ վարագոյններ, սկիհի ծածկոցներ Ս. Յակոբայ տաճարին նուիրուած, գողնալ եւ քանիերորդ անգամը ըլլալով ծախու հանել Լոս Անճելոսի մէջ:

Ո՞վ ունի պատասխանը վերոյիշեալ հարցումներուն:

Կ'ոսկենք վատահեցնել մեր ընթերցողները, ո՛չ հաճելի են այս տողերը արձանագրել թուղթին վրայ եւ ո՛չ ալ՝ հաճելի է ընթերցումը այս ցաւերուն: Արիւն կը կաթի մեր գրիչէն եւ արցունք՝ մեր աչքերէն:

Բայց պէտք է գրել եւ ըսել ճշմարտութիւնը, մանաւանդ այս ահագանգային իրավիճակին ի տես:

Վերոյիշեալ ցաւերը երէկ չպատահեցան: Բայց վերջին հնգամեակին օրէ օր բազմապատկուեցան անոնք մեր ժողովուրդէն անկախ, թարախակալ վէրքի նման:

Լաւատես էինք: Սպասեցինք որ Պատարիարք Հայրը իր մականը շարժէր:

Չըրաւ: Չկարողացաւ: Մտահոգութիւնները գրկեց ու

անոնց տակ սկսաւ կքիլ:

Եւ ահա հոս հասանք:

Այսօր վանքին հարցերը լուծելու համար, հարկ չկայ վիզէն շղթայ մը կրելու, սակայն հարկ կայ Երջ. Գրիգոր Շղթայակիր, Գրիգոր Պարոն Տէր Պատարիարքներու օրինակելի նուիրումը ունենալ, գոհողութիւնը, իմաստութիւնը, վարքն ու կենցաղը ունենալ, դուրս բերելու վանքը իր այս տագնապալի օրերէն:

Կը հաւատանք, որ օրուան պահանջքն է Աթուակից Պատարիարքի ընտրութիւնը, մանաւանդ նկատի ունենալով Պատարիարքութեան դիրքը, որ այսօր գործ ունի երեք պետութիւններու հետ: Իսրայէլի, Պաղեստինի եւ Յորդանանի: Գործ ունի տարբեր յարանուանութիւններու հետ, որոնց հետ միատեղ պահպանն է Սուրբ Քաղաքի սրբատեղիներուն, եւ այսօր մեր տկարութեան պատճառաւ յաճախ բախումներ կ'ունենաք յոյներու հետ, որոնց ինչպէս անցեալին, այսօր եւս հայոց դարաւոր իրաւաստութիւնները խնդրոյ առարկայ կը դարձնեն:

Սկստի ունենալով Միջին Արեւելքի քաղաքական անուպատ պայմանները եւ ապագայի անորոշ եւ աննախատեսելի դժուարութիւնները, հարկ է իմաստութիւնը ունենալ Աթուակից Պատարիարքի մը ընտրութեամբ վերականգնել մեր Պատարիարքութիւնը, վերահաստատել կարգն ու կանոնը վանքէն, ներս, Քրիստի սէրով տողորել մեր անհամերաշխ միաբանութիւնը, հոգեւոր եւ մշակութային կեանքով ներշնչում յառաջացնել, որպէսզի Սիոնի բարձունքէն շարունակուի հայուն համապագօրեայ աղօթքն փառաբանանքը, շարունակելու հայ ուխտաւորներու շարանը՝ հոն ուր կը հանգչին աճիւնը Ս. Յակոբայ Տեառնեղբօր եւ գլուխը՝ Ս. Յակոբին:

Հայ ժողովուրդը իր միահամուռ ուժերով եւ ի մասնաւորի սաղիմահայութիւնը միշտ գօրավիզ եղած են Սուրբ Աթուի եւ դարաւոր մեր պատրիարքութեան: Այսօր եւս, ամէն ժամանակէ ալ աւելի, հայ ժողովուրդը ի սփիւռու աշխարհի, կարիքը ունի հոգեւոր զարթօնքի, հոգեւոր կեանքի, Աստուծոյ Ձայնին:

Այսօր նիւթական կեանքի ընձեռած հաճոյքներուն՝ թէկուզ տնտեսական ծանր իրավիճակին մէջ, մարդիկ տակաւ կը հեռանան Աստուծոյ, եւ հեռանան եկեղեցիէն, հայրենիքէն, եւ ահաւորը՝ սարսափելին՝ հայութենէն:

Ահա թէ ինչո՞ւ հարկ է ի գին ամէն գոհողութիւններու, ողջախոհութեամբ եւ իմաստութեամբ վերականգնել հոգեւոր կեանքը եւ առաքելութիւնը Երուսղէմի Պատարիարքութեան, փշրելով «ԵՍ»-երն ու կիրքերը եւ ներշնչում յառաջացնել Սիոնի բարձունքէն:

Ի՞նչ վիճակի մէջ ալ գտնուի այս դարաւոր հաստատութիւնը, ՄԵՐՆ է, Հայութեան կը պատկանի... Հայաստանեայց Եկեղեցւոյ Առաքելաշաւիղ մեր Սուրբ Աթուին է:

Յոյնը, լատինը, ղպտին, եթովպիացին, աորին պիտի չփկրեն մեր պատրիարքութիւնը, այլ Սուրբ Աթուին իրենց ուխտը կատարած Հայաստանեայց Եկեղեցւոյ միաբանութիւնը... Երուսղէմի միաբանութիւնը՝ ի պահանջել հարկին աշխարհական նուիրեալ եւ միացեալ ուժերով պէտք է փրկել մեր նուիրապետական Երուսղէմի Սուրբ Աթուը:

Վիճակը ծանր է եւ լուրջ: Կրնայ ահագանգային ըլլալ շուտով, եթէ չէ եղած արդէն:

Պարոյր Սեւակ պիտի ըսէր. «Դիմում եմ պահանջելու պէս...» Աթուակից Պատարիարքի ընտրութիւնը, որ ՕՐՈՒԱՆ ՊԱՅԱՆՁՔՆ է:

Վաղը ուշ է: Լսող կա՞ց...:

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

ARMENIAN INDEPENDENCE DAY

ՓԵՍՏԻՎԱԼ ՄԱՂՄԱՄԻՈՆ

SUNDAY SEPTEMBER 26, 2010
VERDUGO PARK, GLENDALE



Live Music
Dancing
Art Work Exhibition
Kids Games
Armenian Food

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՐՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ



Cosponsored by the City of Glendale

Media Sponsors



Sponsors



To reserve your booth
please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար
Վեռաձայնեցեք Նոր Սերունդ Մշակութային Միության
(818) 391-7938